

Դ. Մարտիկան
ՆերքոնդակաՆ Երկրորդ
Բ 1910թ.

891.99-

Պ-34

19 NOV 2011

063- 15/11/78

4
11/15

ՆՇԱՆ - ՊԱՊԻԿԵԱՆ ՄԱՏԵՆԱԳԱՐԱՆ

ԱՄՐՈՂՋ ԵՐԿԵՐ

Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆԻ



Բ.



Պաշասար Աշխարհ

(ԿԱՏԱԿԵՐԳՈՒԹԻՒՆ ԵՐԵՔ ԱՐԱՐՔՈՎ)



ՏՄԱՐԱՆ ԵՒ ԳՐԱՏՈՒՆ

Ն Շ Ա Ն - Պ Ա Պ Ի Կ Ե Ա Ն

Կ. ՊՈԼԻՏ

1910

600

❖ ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ ❖

ՊԱՂՏԱՍԱՐ ԱՂԲԱՐ

ԿԱՏԱԿԵՐՐՈՒԹՅՈՒՆ ԵՐԵՎԱՆԻ ԱՐԱՐԻՈՎ

միկրո մկրոմ	րազմ րասաջրաթ
ցմիկ միասաջրաթ	չումԱ
ցմիկառի մկրոմ	րաբիբ
մազառափ	միթԾ
մախմառառաբ	} թալափ
թալառի մկրոմ	
	րա
ցրեմիկառի միասաջրաթ	} զմառաթ
միկրառաթ «	ձուրոՄ

Գրանցումը կատարվում է մասնագիտացված օրինակով

1938

891.99

7534

uf

ՆՇԱՆ - ՊԱՊԻԿԵԱՆ ԲԱՏԵՆՈՒԹՅԱՆ

ԱՄԲՈՂՁ ԵՐԿԵՐ

Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆԻ

Բ.

ԹԱՏԵՐԳՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՂՏԱՍԱՐ ԱՂԲԱՐ

ԱՐԵԻԵԼԵԱՆ ԱՏԱՄՆԱԲՈՅԺԸ

Պ Ռ Ո Յ Գ

1001
3383

Հ.Ս.Խ.Ն. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԳԱՐԱՆ
Ս.Ս.Ր.Ա. ПУБЛИЧНАЯ БИБЛИОТЕКА
7/ХІ—1922
ЖЕНА А МЯСНИКОВА
Ա. ՄՅԱՍՆԻԿՈՎՆԻ ԱՆՎԱՆ

ՏՊԱՐԱՆ ԵՒ ԳՐԱՏՈՒՆ
Ն Շ Ա Ն - Պ Ա Պ Ի Կ Ե Ա Ն

Կ. ՊՈԼԻՍ

1910


Ա Ն Զ Ի Ն Ք

Պաղտասար Աղբար	Անոյշի երիկն
Անոյշ	Պաղտասարի կինը
Կիպար	Անոյշի սիրահանը
Օգսեն	Փաստաբան
Փայլակ } Երկաթ }	Դասասանակա՛ն Խոս հուրդի սևդակ
Սուր }	
Թագուհի } Մարթա }	Պաղտասարի դրացիները
Սողոմե	» սպասուհին

Տեսարանն է՝ Պաղտասար Աղբարի տունը

ՀԱՊԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒՊԵՍՈՒՄ - ՀԱՅՏ

ԳՅՄԳՅ ԶՂՈՂՄԱ
ԴՅՄՅՄՈՂԱՄՔ .Ե .Ե



.Գ



ԳՅՄՄԴԿՊԻՆՈՒԿՆԵՐ


ԴՄԳՂՄ ԴՄՍՄՁՂՄՄ
ԵԿՑՈԳՄՄՍՄՁՄ ՄՄՅՂԿԿԳՄ
Ք Ե Ո Ղ Մ



ԴՊՁՄԳԳ ԿՅ ՄՄՄՄՁ
ՀԱՊԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՅՈՒՊԵՍՈՒՄ
ՍԿՂՈՒՔ .Գ



ՊԱՂՏԱՍԱՐ ԱՂԲԱՐ



ԱՐԱՐԳ ԱՌԱՋԻՆ



(Թասրոնը կը ներկայէ ընդարձակ եւ նոյն կարապետներով զարդարուած սրահ մը, յաջ եւ յսկեակ երկերկու սենեակ, պարսեզի եւ փողոցի վրայ պատահաններ, միջին դուռ մը):

Տ Ե Ս Ի Լ Ա.



ԱՆՈՅՇ (փողոցին վրայ պատահանին առջև նստած քակինակ ի ձեռին), ԿԻՊԱՐ, յետոյ ՍՈՂՈՄԷ

Կիպար. — Տիկին, գործելու ժամ է և ո՛չ լալու. սրբէ՛ արտասուքդ և վայրկեան մ'ինձի մտիկ ըրէ՛:

Անոյ՛. — (Աչերը արեղով) Կը խոստանա՞ս ուրեմն պաշտպանել զիս:

Կիպար. — Վատութեանց ամենէն սոսկալին գործած կ'ըլլայի եթէ վայրկեան մ'իսկ մտաբերէի լքանել, թողուլ զքեզ զոր տասն տարիներէ հետէ պաշտած եմ և որուն երկիր պիտի պագնեմ յաւի-

զիմադրել, թէեւ համողուած եմ թէ անմեղ եմ այս գործին մէջ, բայց դարձեալ կ'ուզեմ որ ամեն մարդ կարծէ թէ բնաւ սիրած չեմ զքեզ և թէ միշտ հաւատարիմ գտնուած եմ ամուսնոյս:

Կիպար. — Անշուշտ ... պիտի աշխատինք որ իբրեւ զբարտիչ դատապարտուի:

Անոյ՛. — Իսկ եթէ չյաջողինք...:

Կիպար. — Անպատճառ պիտի յաջողինք, բաւական է որ հրահանգացս համաձայն վարուիս:

Անոյ՛. — Կը խոստանամ:

Կիպար. — Ահաւասիկ իմ հրահանգներս, նախ...:

Անոյ՛. — (Անուսնոյն զարը տեսնելով պատուհանէն) Երթամ, ահա կուգայ:

Կիպար. — Գնա՛, վերջը կը տեսնուինք... կամ Սողոմէին հետ կը զրկեմ քեզ հրահանգներս:

Սողոմէ. — Քաժնուեցէ՛ք... վազելով կուգայ... (Անոյ՛ կը մեկնի) Ի՞նչ մը խրատէիք ու յորդորէիք զինքն որ շատ չի յուզուի:

Կիպար. — Կամաց կամաց կը վարժուի...:

Սողոմէ. — Երէկ զիշեր տեսնելու էիր խեղճն... զիմանալու բան չէր... Ժամերով լացաւ... քուկին Պաղտասար աղբարդ ալ խենդ կով դարձած էր... կատղած էր... բան մ'ալ բլլա՞ր գոնէ... Փառք Աստուծոյ, ի՞նչ կայ բարկանալու մարդ Աստուծոյ, կերակո՞ւրդ պատրաստուած չէր, լաթե՞րդ լուացուած չէին... անկողի՞նդ շտկուած չէր... տուն եկար, չէնքով շնորհքով կերակուրդ կե՛ր, գնա՛ տեղդ պառկէ՛... չէ, չէ, առաջուընէ ի վեր բծախնդիր է Պաղտասար աղբարն... պզտիկ բանի մը համար շուտ մը կրակ կը կտրի...:

Կիպար. — Այս անգամուհանը բոլորովին բծախնդրութիւն է:

S E U H L F.

ԿԻՊԱՐ ԷՆ ՊԱՂՏԱՍԱՐ

Պաղտասար. — (Արագախալ մեկերով) Ինձի Պազտիկ կ'ըսեն... (առ Սողոմէ) դուքս գնա՛, դուռն ալ դոցէ՛ և թող մի՛ տար որ ուրիշ մարդներս մտնէ, շո՛ւտ բրէ, շո՛ւտ, դուքս գնա շուտ...:

Ներեցէ՛ք, պարոն Կիպար, զձեզ կանչել տալուս համար: Երբ մարդս փորձանքի մը կը հանդիպի, բնականաբար իր ամենէն մօտ բարեկամներուն կը զիմէ անտնցմէ խելք սորվելու համար: Սարսափելի փորձանք մեկաւ գլուխս, երէկ իրիկուընէ ի վեր խելքս կորուսած եմ, ո՛չ բրածս զիտեմ, ո՛չ բսածս. ընտանեկան զազանիք մ'ունիմ քեզ հաղորդելու, քեզ՝ որ միակ բարեկամս ես, քեզ՝ որոյ անկեղծութեանը կատարելապէս վստահ եմ:

Կիպար. — Շնորհակալ եմ, այդ ձեր ազնուութիւնն է:

Պաղտասար. — Ես ամեն մտքողու գաղտնիք չեմ բանար, թէպէտ և դրսէն կոշտ ու ապուշ մէկը կ'երեւամ, բայց առաջ Աստուած, թշնամիս ալ կը ճանչնամ բարեկամս ալ, ինձի Պազտիկ կ'ըսեն, գործս գիտեմ ես:

Կիպար. — Այո՛:

Պաղտասար. — Վստահ եմ որ ձեզի հաղորդելիք գաղտնիքս ձեր քովը պիտի մնայ:

Կիպար. — Անշուշտ:

Տ Ե Ս Ի Լ Գ .

ՊԱՂՏԱՍԱՐ , յԵՏՈՅ ԹԳՍԷՆ ՈՒ ՍՈՂՈՄԷ :

Պաղտասար . — Ի՞նչպէս վազելով կ'երթայ իմ գործիս համար . մարդ մ'որ ինձի համար հոգին կուտայ , բարի , պարկեշտ , ազնիւ ու վրստահելի անձ մ'որու նմանն գտնելը խիստ դժուար է ժամանակիս մէջ . . . :

Սողոմէ . — (Դրսէն) Թող չեմ տար որ մտնես :

Օգսէն . — (Դրսէն) Պիտի մտնեմ :

Պաղտասար . — Օգսէնն է . . . մոռցանք ապա . . . :

Սողոմէ . — (Դրսէն) Ոչ :

Օգսէն . — (Դրսէն) Այո : (Դուռը ներելով կը բանայ ու կը մտնէ) Ի՞նչ խայտառակութիւն է աս , Պաղտասար աղբար :

Պաղտասար . — Ներեցէ՛ք , խելքս գլուխս չէ . . .

Օգսէն . — Պաղտասար աղբար , ի՞նչ խայտառակութիւն է աս :

Պաղտասար . — Յանցանքն իմն է . . . :

Օգսէն . — Ի՞նչ նախատինք , ի՞նչ անարգանք , ի՞նչ թշնամութիւն է աս Պաղտասար աղբար , դիս տուն կը հրաւիրէք և ձեր աղախնոյն կ'ապսպրէք որ ներս չընդունի զիս :

Պաղտասար . — Մոռցայ . . . :

Օգսէն . — Ի՞նչը մոռցար :

Պաղտասար . — Պատուիրել . . . :

Օգսէն . — Ի՞նչ ըսել է պատուիրել :

Պաղտասար . — Որ թող տայ :

Օգսէն . — Ի՞նչ կը նշանակէ որ թող տայ , ի՞նչ յարաբերութիւն ունի որ թող տայ իմ հարցմանս հետ . . . որ թող տայ եղեր . . . :

Պաղտասար . — Ձեզի ներս մտնել :

Օգսէն . — Ոչինչ խօսքեր , անպիտան արդարացումներ . . . խնդիրը ծանր է , փաստաբան մը , իրաւագէտ մը , արդարութեան գործակատար մը բռնաբարուած է , նախատուած է , անարգուած է , պատուոյ գոհացում , փոխարինութիւն կը պահանջեմ : Դիտէ՞ք որ օրէնքը քսան ոսկւոյ տուգանաց կը դատապարտէ այսպիսի յանցանաց հեղինակները , և հետեւաբար քսան ոսկի դուք պիտի վճարէք և քսան ոսկի ձեր աղախնը . . . :

Սողոմէ . — Ոտքդ պագնեմ , ևս . . . :

Օգսէն . — Ոչ :

Պաղտասար . — Մեծապատիւ Տէր , կ'աղաչեմ , ներեցէ՛ք , խելքս գլուխս չէ . . . :

Օգսէն . — Ոչ :

Սողոմէ . — Ես սխալ հասկցեր եմ :

Պաղտասար . — Ես ձեզի համար չըսի որ ներս չառնէ :

Սողոմէ . — Օտարական մը կարծեցի զձեզ :

Պաղտասար . — Ձեզի դէմ ինչո՞ւ պիտի գոցենք մեր գունբը :

Սողոմէ . — Ամեն օր հրամմէ՛ , եկուր :

Պաղտասար . — Վսեմափայլ Տէր , գթա՛ ինձի , տունս կործանած է . . . :

Սողոմէ . — Մի՛ սրդողիք . . . երթամ անուշ մը բերեմ ձեզի :

խնդիրը փոփոխել է. պապ արեամբ խորհինքը և
անանկը թէ ի՞նչ են օրինաց արամարտութիւններն
այս մասին: սխմանէ իողով իողաց ... մո՛ւ մտտ
Պաղտասար. — Ազգային Հիւանդանոց գրկել
չլի՞թալով կապել, անօթի պահել, ամեն գիշեր ձե-
ծել, սակրները ջարդուբարդ ընել և աշխարհե
վերջնել ասանկ իրը և անպատիւ կիները:

Օգսեն. — Չափաորեցէք ձեր լեզուն: Առանց
օրինաց վճիռն ստանալու իրաւունք չունիք պղ-
կնով լիրը և անպատիւ ըսելու, ձեր պիկիւնն ղեռ
պարկեշտ ու պատուաւոր կին մ'է աշխարհի և օ-
րինաց ասել:

Պաղտասար. — Պարկեշտ ... պատուաւոր ...
կին մ'որ վատահամբաւ տունէ մը դուրս ելած
է...

Օգսեն. — Այդ անպատիւ դուռն կտարելով ու
խորտակելով ներս մտած է թէ դուռը բաց գրտ-
նելով ներս մտած է:

Պաղտասար. — Ինչու ևս պէտք, բուռական է որ
մտած է հոն:

Օգսեն. — Ինչքան պէտք է այս պարագայն,
կ'ազանւմ որ բռնէք:

Պաղտասար. — Տէր սղորմեա, ի՞նչ գիտնամ
ես... բայց դուռը խորթիւր և խորտակիւր շարկ
չկայ:

Օգսեն. — Ապա ուրեմն բաց դռնով է գտնու-
նու ներս մտած է ասա նրբազուցիչ գեղեցիկ յանցա-
նաց մը...

Պաղտասար. — Ի՞նչ կ'ուրեմն զէ նրբազուցիչ
գեղեցիկ յանցանաց մը...

Օգսեն. — Այսինքն գէտը մ'որ յանցանքը կը
նրբազուցի կը բարակցնէ...

Կի Պաղտասար. — Կեղքը ի՞նչ կ'ընեն այդ բարեփո-
խանցանքը ... զանա *Հոյ մարտիրոսը Լաւրէր մ Յով*

Օգսեն. — Բարեփոխանցանքին արտաթիժ
բարակ կ'ըլլայ: այս մտկիւն զո յով — մխրթ
: զա Պաղտասար. — Չեմ հասկնար բարակ յանցան-
քէն, զայնտ յանցանքէն: անկի — րաստաբար

: զա Օգսեն. — Փագմարանտկան լեզուով ներքնոյ
ցիչ քիպի շանցանաց կը բարտ: ասա Ս — մխրթ

Պաղտասար. — Ինչ կ'ըսէ զրեւոյց: մո՛ւ յ ճառն
տ: Օգսեն. — Դարդիբերէն, սիրքօն դանտ արթնիւ-
անդ: սխմանէ մոյ իողով իողաց

Պաղտասար. — Չեմ կրնար ըմբռնել:

Օգսեն. — Ի տարիբերէն չըրքօսդ անցա ազգէ՛-
նուանդէ: ինչ, զանա զողով — րաստաբար

Պաղտասար. — Ի տարիբերէն չեմ կրնար:

Օգսեն. — Այժմ անբէն: Դիտեք ունկա-կրտնա:

Պաղտասար. — Ուրիշ կերպով մը ճանկցուր:
: զա Օգսեն. — Յոռաբերէն է յափրին թիքի բերնդա-
սին: զո միլ լամիլ սխրթ — րաստաբար

Պաղտասար. — Ի երկուստեք զիտէի քիչ մը,
չառ անգամ լամե եմ, բայց չեմ ինչեր թէ ինչ
ըսել է:

Օգսեն. — Անգղիերէն սկըքմազանա ազգէ՛-
նու լինի:

Պաղտասար. — Հայերէն չառնցուր մտտ (ան-
պիտանիւր ան, իկարտալ մգ միցօ զո ց իքմիցնա՛

այ Օգսեն. — Երբանցուցիք արեւոյ յանցանաց
այսինքն ճանկցումն քննարկ պարտեց անկեր քր յանգ
ցանքը կը մեզմայնն կը լի կ'իմե զենն: Կը պղտիկ
ցընեն: Անգղիերէն չառնցուցիք արեւոյ յանցանքն

պատճառներ զորս յանցաւորը կը փնտռէ պատիժը
թեթեւցնելու, պղտիկցնելու համար:

Պաղտասար. — Մանկ չըսե՞ս, հասկցայ:

Օգսեկն. — Թէ որ տիկինն դուռը կտարելով
ներս մտած ըլլար՝ պատիժն աւելի ծանր կ'ըլլար:

Պաղտասար. — Կ'իմանամ: Բայց վերջապէս
մտած է այդ անիծեալ տունը մէկը սիրելու համար:

Օգսեկն. — Մ'անաւորապէս սիրելու զիմամ՝ մը
մտած է հոն՝ թէ զիպուածով սիրած է:

Պաղտասար. — Ասոնք իմ տանս պատուոյն հետ
վերաբերութիւնն չունին:

Օգսեկն. — Սիրականն պատանի՞ է թէ չտփա-
հաս:

Պաղտասար. — Կրողը տանի, ո՞վ գիտէ:

Օգսեկն. — Գեղեցի՞կ է, թէ տգեղ:

Պաղտասար. — Կը խնդրեմ վերջացուր այս
հարցումները:

Օգսեկն. — Բարի՞ նպատակաւ սիրած է թէ չար:

Պաղտասար. — Խնչպէս կրնայ կին մը բարի
նպատակաւ խաբել, մատնել իւր էրիկն: Խնչ խայ-
տառակութիւնն է աս ... ես հերը կ'անիծեմ այդ
նրբացուցիչք դէպքը յանցանացին ալ, հնարողին
ալ ... իմ կինս, իմ ընկերս, իմ կողակիցս, իմ
լծակիցս ինձմէ զատ ուրիշ անձ մը սիրած է, ե-
ղևոն, ոճիր գործած է, կախուելու արժանի է ...:

Օգսեկն. — Շատ կ'աճապարէք վճիռ տալու.
համբերեցէ՛ք որ օրէնքն խուզարկէ, հետազօտէ,
քննէ, սերտէ և ուսումնասիրէ այն պատճառներն,
որ ստիպած են կինդ սիրական մ'ունենալու: Թե-
րեւս իրաւունքներ ունի ուրիշ մը սիրելու: Թողէք
ուրեմն որ սերտեմ խնդիրն, որպէս զի չկորսնցնենք

դատը: Դուք կ'ուզէք որ ձեր վկայութեան վրայ
անմիջապէս պատժուի ձեր տիկինը: Կարելի չէ այդ:
Շատեր ձեզի պէս իրենք զիրենք անմեղ կարծելով
դատ վարած են իրենց կնոջ դէմ և ինքեանք
յանցաւոր և պարտաւոր ելած են դատարանէն:

Պաղտասար. — Ըստ ձեզ անմեղ է ուրեմն
կինս:

Օգսեկն. — Ըստ իս այժմ ամեն ինչ մթու-
թեան մէջ է. չեմ ըսեր թէ կինդ անմեղ է, ի վե-
րայ այսր ամենայնի չեմ ալ պնդեր թէ մեղաւոր
է. ո՛չ կրնամ արդարացնել կամ դատապարտել
կնոջդ սիրականը, ո՛չ ալ կրնամ համարձակիլ
վճռելու թէ յանցաւորն դուք էք:

Պաղտասար. — Հաւանականութիւն կ'այ որ
ես ալ յանցաւոր ըլլամ այս խնդրոյն մէջ:

Օգսեկն. — Ամեն բան հաւանական է:

Պաղտասար. — Ըսել է թէ այդ կինն կարելի
չէ այսօր Փրկիչ գնել:

Օգսեկն. — Անհնար է: Նրբացուցիչ դէպք յան-
ցանաց այնչափ յառաջ գնացած է որ եթէ կինդ բարի
նպատակաւ մը սիրած է ուրիշ մը, այսինքն՝
ի նպատտ ազդային յառաջադիմութեան և լուսա-
ւորութեան, կամ յօգուտ որբեր, հաշմանդամներ,
ձերեր, անկարներ, աղքատներ ու անանկներ
պատսպարելու գովելի և ազգօգուտ ձեռնարկի
մը, կինդ կ'ըսեմ, լրագրաց մէջ կ'անցնի, գո-
վեստներ, դափնեայ պսակներ կ'ընդունի, որով-
հետեւ մասնաւորին շահն ընդհանուրի շահուն զո-
հելու գիւրցազնութիւնն ունեցած է, և այս պա-
րագային մէջ ...

Պաղտասար. — Ես եմ ուրեմն յանցաւորն:

Օգսեկն. — Իսկ ընդհակառակն՝ եթէ սիրէք

աղեղ կամ ձկն ճակակիր անձ մը՝ քնակահարար
կը ծանրացներ լանցանքը միջոցունք օրէնքն ինչ
պարակաց կարծիքն կը դատաստարներ զինքն ընթան
լով. « Գունն սերածն զեղեղիկ երիտասարդ կամ հար
մակիր մէկն ըլլար : »

Պաղտասար. — Վազը կրնա՞նք Փրօնիս Գնել :
Օգտէն. — Անկարելի է : Իսկ եթէ դուք ձեր
կնաջն անհատասարիմ գտնուեցով, կամ նոսրան
ձեղով, կամ հետն խնորձեանք վարուելով, արտո
ճատ տուած էք իրեն սիրակիտ մ'ունենալու, այն
պարագային մէջ մեծ պատասխանատուութիւն կը
հրաւիրէք ձեր վրայ :

Պաղտասար. — Ինչո՞րի պէս կը սիրէի զինքն.
ուրիշ կնկան երեսն անգամ նայած չունիմ :
Օգտէն. — Վստա՞ր եղէ՞ք ուրեմն : Ժամանակս
սուղ է, չարկ է որ երթամ : Պիտի աշխատիմ իրա
ւարանական և փաստաբանական բոլոր կարողու
թեամբս այդ դատին մէջ զձեզ անմեղ հանդիսա
ցնելու և ձեր կինն բանգարը շինելու :

Պաղտասար. — Երբեցո՞ցիչ սեպ յանցանա
ցին չատ կարեւորութիւն մի տար :
Օգտէն. — Իմ պարտքս պիտի ըլլայ զօրաւոր և
հասա փաստերով Լախմարիկ նորացուցիչ զէպքեր :

Պաղտասար. — Ետրեակալ եմ :
Օգտէն. — Ի տեսութիւն : (Կերայ) :

Տ Ե Մ Ի Լ Ե

Պ Ա Ղ Տ Ա Ս Ս Ր

Պաղտասար. — Երթամ բարով նորացուցիչ
փայտաբան . . . զիչ մնացար յանցաւոր իրէր զիս

մեր մեծապատիւ իրաւագէտը : Եթէ թող բերան
ու ապուշ մարդ մ'ըլլայի՝ տարակոյս չկար որ
յանցանքն վրաս ծանրացնել զլտի ուղէր և բուն
յանցաւորն արդարացնել պիտի աշխատէր : Անա
ռակ կինն մաքուր աղանիկ պիտի դառնար, որով
հետե նորացուցիչ զէպք յանցանաց ունի եղեր,
որովհետեւ այս նորացուցիչն զազգիներէն իրտակե
րէն, յունարէն, ալմաներէն ու անզոյիներէն ալ
ունի՝ եղեր, որովհետեւ սիրելու զբնասողութեամբ
սիրած չէ եղեր, այլ զիպուածով սիրած է եղեր,
որովհետեւ սիրածը ձեր ոչ մեզնի չէ եղեր, որովհե
տեւ չար նպատակաւ սիրած չէ եղեր ան ըստի
նպատակաւ սիրած է եղեր, բարեկարծութիւն
մը ընելու համար սիրած է եղեր, որովհետեւ . . .
ինչ գիտնամ, այս որովհետեւնեքուն վերջը չգար
որ, և թողոր այս որովհետեւնեքուն այդ իրքիս, այդ
անհաւատարիմ կնաջ, այդ դժոխային էակին ան
մեղութիւնն կ'նպաստեցանեն եղեր : Երկընդ պը
նուէր սիրեմ, անէր փռտաբանն, մենք ալ կը
հասկնանք զիչ մը փաստաբանութենէ, մենք
ալ թեզի չտի Չէն Լուկեւոր խառնած ենք ժառան
րակին : Բանսով նորացուցիչ բաներ կ'ընտաներէն
չենք : Ոչնչոքն հողի հայրս ալ անանկ էր, ոչ ալ
անորը կ'երթային իրմէ խելք սորվելու, մեծ հայրն
ալ ինչոցիչ էր, մենք ցեղով անանկ ենք, բնակա
նէն փաստաբան ենք և անմեղացէն կը հասկնանք
թէ որո՞ւ քովն է իրաւունքը . . . :

Գարեման բղան ցն չից ցո թ դմի թ բժշկութեամբ
Բիւսպիզակով դարիմ ռո բրոց զապաի սխայ կատա
-բաթ ցգ.մնա ցո սխ.մնա , դիմանա ցր դաղաձով
ցո ցոսլա մ , վրմց միլչ.մնա ցր դաղցրա դասատ

Տ Ե Ս Ի Լ Զ.

ՊԱՆՏՈՒՍՈՒՐ ԵՆ ԱՆՈՅՇ

Անոյ՛. — Ա՛լ չեմ կրնար հանդուրժել անարգանացդ . . . :

Պաղտասար. — Տակաւին երես ունի՞ս դիմացս երեսուցու :

Անոյ՛. — Եւ կ'ուզեմ որ հիմա անմիջապէս բաժնուկինք :

Պաղտասար. — Եթէ քիչ մը խիղ ու ամօթ ունենայիր՝ պիտի երթայիր սենեակիդ մէջ մազերդ փեթտելու և . . .

Անոյ՛. — Ինչո՞ւ մազերս փեթտեմ եղեր . . . մանաւանդ թէ մազերուս անուշահոտ իւղեր պիտի քսեմ ազերախտ մարդու մը ձեռքէն փրկուելուս համար : Ափսո՛ս, բիւր ափսո՛ս քեզի բարձր դասու ընկերութեանց մէջ մտցնելուս համար. կարգուած ժամանակդ չէնքով շնորհքով բարե մը տալ չէիր գիտեր. աւանդ այն ջանից զոր դըր վրադ գլուխդ շտկելու, մարդու պէս հագուեցընելու համար. աւանդ այն հոգերուն զոր բարձի քեզի պարել տրվեցնելու համար, կարգուած տարիդ շիտկէ-շիտակ քալել անգամ չէիր գիտեր. ափսո՛ս, ափսո՛ս իմ զոհողութեանցս . . . հետս կարգուելէդ ի վեր է որ քիչ մը մարդ ձանչցար, առաջ լայն վարտիքովդ ու երկար վերարկուովդ խոհարար կը նմանէիր, այնպէս որ ամենքը Պաղտասար աղբար կը կանչէին քեզի, և այսօր որ

քիչ մը մարդու կարգ անցար, ես անառակ եղայ, անպատիւ եղայ, այնպէս չէ՞ . . . :

Պաղտասար. — Մեր ցեղը քիչ մը ազերախտ է . . . :

✠ Անոյ՛. — Ինձի պէս կ'նիկ մը քեզի համար շատ էր ու ծանր, գիտէի որ չպիտի կրնայիր տանիլ զիս, որովհետեւ դարուս լուսաւորութեան ու գին ըմբռնած չէիր, որովհետեւ կիներն իբրև սարուկ կը նկատէիր, այս ամենը գիտէի, բայց կը համբերէի, անիծելով միայն այն օրն ուր խօսք տուի քեզի հետ ամուսնանալու :

Պաղտասար. — Բարով խերով չտալիր . . . :

Անոյ՛. — Դրացիներս կը ջանային համոզել զիս որ չկարգուեմ հետդ, այն փատի կտորին հետ ի՞նչպէս պիտի ապրիս կ'ըսէին, իսկ ես կը պատասխանէի իրենց թէ նշանածս աղէկ մարդ էր :

Պաղտասար. — Բարով խերով չըլլայի . . . :

Անոյ՛. — Ամուսնանալէս վերջը քանիննր ըստին ինձ թէ այդ աւանակին հետ ի՞նչպէս ժամանակ կ'անցունես. և ես պաշտպանեցի այն ատեն քեզի, պատասխանելով անոնց թէ ամուսինս խելացի մարդ է :

Պաղտասար. — Այդ քանիններն են աւանակներ . . . և դու չես խպնիր ասանկ խայտառակ խօսքեր ընելու . . . :

Անոյ՛. — Բնաւ չեմ մոռնար, որ մը քու բարեկամներէդ մին ըսաւ թէ «Սիրող չկոտրի, Պաղտասարն աղէկ մարդ է, բայց կոշտ է, հետը խօսք չըլլար բնաւ :» Այս խօսքին վրայ տուն դարձեր եմ և երկու ժամ նստեր, լացեր եմ : Ոմանք ալ չգիտնալով որ կ'ինդ եմ — որովհետեւ չկայ

մեկին որդեգրելու վայելցնել ինձի արդարեւ ըստ աստի
 ին և անանկ ծիծաղաշարժի արդարեւ ըստ աստի
 արդարեւ որ կամ զայն յայտնել լի է կիրարկում Խնչ
 կ'ընէի, սիրաս կը դնէի, կուլայի և քեզի քան մը
 ջէի քննելով իմ քեզի ջանայի քանային որ զմարդ ըլ-
 րատ կ'ընելով իմ քեզի մէջ ջանային քանային և զևս այս
 բոլոր ջանքերս քո պէտքով մէջ ժողովուրդս քեզի
 խղէի» միայն մնայի մտածելոց, դիմէ ճամադեց միջ
 մայի Պաղեսապար . . . քեզի այն ամենը կ'ընէի որ զքեզ
 մը քեզի իմ քեզի համար միջ միջ այն քեզի իմ քեզի միջ
 Անոյց . — Զո՞վ սիրածս քեզի մտնա ամ զքեզ .

Պաղեսապար . . . քեզի իմ քեզի մտնա ամ զքեզ .
 յիմ քեզի մտնա ամ զքեզ իմ քեզի մտնա ամ զքեզ .
 տեղով իմ քեզի մտնա ամ զքեզ իմ քեզի մտնա ամ զքեզ .
 տեղով իմ քեզի մտնա ամ զքեզ իմ քեզի մտնա ամ զքեզ .

Պաղեսապար . . . քեզի իմ քեզի մտնա ամ զքեզ .
 Անոյց . . . Սյոն ճամադեց իմ քեզի մտնա ամ զքեզ .
 մեր կեանքս արձակելու միջոցներուն վրայ իմ քեզի
 դանկելու իմ քեզի մտնա ամ զքեզ իմ քեզի մտնա ամ զքեզ .
 իմ քեզի մտնա ամ զքեզ իմ քեզի մտնա ամ զքեզ .
 իմ քեզի մտնա ամ զքեզ իմ քեզի մտնա ամ զքեզ .

Պաղեսապար . — Սյո ամեն միջոցներս քեզի
 դիմեմ որպէս զի մտնա ամ զքեզ իմ քեզի մտնա ամ զքեզ .
 իմ քեզի մտնա ամ զքեզ իմ քեզի մտնա ամ զքեզ .
 իմ քեզի մտնա ամ զքեզ իմ քեզի մտնա ամ զքեզ .
 իմ քեզի մտնա ամ զքեզ իմ քեզի մտնա ամ զքեզ .
 իմ քեզի մտնա ամ զքեզ իմ քեզի մտնա ամ զքեզ .
 իմ քեզի մտնա ամ զքեզ իմ քեզի մտնա ամ զքեզ .

ՍԵՒԵԼԷ . . . քեզի իմ քեզի մտնա ամ զքեզ .
 իմ քեզի մտնա ամ զքեզ իմ քեզի մտնա ամ զքեզ .
 իմ քեզի մտնա ամ զքեզ իմ քեզի մտնա ամ զքեզ .

Կիպար . — Բարեբաղդ իմ քեզի մտնա ամ զքեզ .
 իմ քեզի մտնա ամ զքեզ իմ քեզի մտնա ամ զքեզ .
 իմ քեզի մտնա ամ զքեզ իմ քեզի մտնա ամ զքեզ .
 իմ քեզի մտնա ամ զքեզ իմ քեզի մտնա ամ զքեզ .

Կիպար . — Եւ ձայնով բաժանման մտնա ամ զքեզ .
 իմ քեզի մտնա ամ զքեզ իմ քեզի մտնա ամ զքեզ .
 իմ քեզի մտնա ամ զքեզ իմ քեզի մտնա ամ զքեզ .
 իմ քեզի մտնա ամ զքեզ իմ քեզի մտնա ամ զքեզ .

Կիպար . — Մտնա ամ զքեզ իմ քեզի մտնա ամ զքեզ .
 Անոյց . — Սյո ամեն միջոցներս քեզի
 կեանքս արձակելու միջոցներուն վրայ իմ քեզի
 դանկելու իմ քեզի մտնա ամ զքեզ իմ քեզի մտնա ամ զքեզ .
 իմ քեզի մտնա ամ զքեզ իմ քեզի մտնա ամ զքեզ .
 իմ քեզի մտնա ամ զքեզ իմ քեզի մտնա ամ զքեզ .

Պաղեսապար . — Յանցաւ որք պատժուի իմ
 Անոյց . — Սյո և կ'արդ կը պահանջեմ որ յան-
 ցաւ որք պատժուի և հակառակ իմ կ'ընն պատժուի :
 Ենթադրենք վայրկեան զի լի է սիրական մտնա ամ
 իրօք և զնենք թէ սիրական մտնա ամ զքեզ .
 ցաւ, ինչ ընթացք իմ քեզի մտնա ամ զքեզ .
 ամեն բան տակաւ լրանի իմ քեզի մտնա ամ զքեզ .
 դիմել, պատժուի կանչուի : մտնա ամ զքեզ .

- Պաղտասար. — Այո՛, այո՛ :
- Կիպար. — Պարտաւոր էիր նախ կինդ կան-
չել ... :
- Անոյ՛. — Պաղ արեամբ խօսիլ ...
- Կիպար. — Գործն իրմէ ստուգել ...
- Անոյ՛. — Առանց բարկանալու ...
- Կիպար. — Եւ եթէ իրօք սիրական մ'ունի ...
- Անոյ՛. — Ներել ու խրատել ...
- Կիպար. — Որ ուրիշ անգամ ...
- Անոյ՛. — Ասանկ պակասութեան մէջ չգըտ-
նուի ...
- Կիպար. — Եւ եթէ երկրորդ անգամ գտնուի ...
- Անոյ՛. — Երկրորդ անգամ ներել ...
- Կիպար. — Խրատել, յորդորել ...
- Անոյ՛. — Եւ ըսել թէ աղէկ բան չէ ...
- Կիպար. — Սիրական մ'ունենալը ...
- Անոյ՛. — Ուրիշ սիրականներ ալ ունենալու
կ'առաջնորդէ ...
- Կիպար. — Եւ թէ շատ սերականներ ունե-
նայն ...
- Անոյ՛. — Հաճոյ չթուիր ամուսիններուն ...
- Կիպար. — Վերջապէս շարունակ բարոյախօ-
սելով ...
- Անոյ՛. — Յորդորելով ...
- Կիպար. — Համոզելով ...
- Անոյ՛. — Խրատելով ...
- Կիպար. — Չախելով ...
- Անոյ՛. — Շոյելով ...
- Կիպար. — Սպառնալով ...
- Անոյ՛. — Ներելով ...
- Կիպար. — Տան պատիւն պահելու է ...

- Անոյ՛. — Եւ տան պատիւն ալ ասանկ կը պահ-
ուի ...
- Կիպար. — Բոլոր աշխարհին ըրածը այս է ...
- Անոյ՛. — Մեր հօրէն ու մօրէն տեսածն ալ
այս է ...
- Կիպար. — Եւ ոչ թէ ...
- Անոյ՛. — Կրակ կտրիլ ...
- Կիպար. — Փաստաբաններու դիմել ...
- Անոյ՛. — Խորհուրդ հարցնել ...
- Կիպար. — Բաժանում պահանջել ...
- Անոյ՛. — Դատարաններու մէջ խայտառակ-
ուիլ ...
- Կիպար. — Ամենուն բերանն իյնալ ...
- Անոյ՛. — Մատի վրայ փաթտուիլ ...
- Կիպար. — Բարեկամաց երեսէն իյնալ ...
- Անոյ՛. — Տանը դռները դոցել ...
- Կիպար. — Ընտանիք մը կործանել ...
- Անոյ՛. — Վերջէն զղջալ ...
- Կիպար. — Կնիկս կ'ուզեմ ըսել ... (Անոյ՛
եւ Կիպար խօսիտի այնպիսի շոտ կ'առնեն իրարու
բերնէն որ Պաղտասար երկուքին մեջտեղ կեցած մի-
ջոց չցկնէր խօսելու:)
- Անոյ՛. — Չկրնալ առնել ...
- Կիպար. — Լալ ...
- Անոյ՛. — Ողբալ ...
- Կիպար. — Արտասուել ...
- Անոյ՛. — Հառաչել ...
- Կիպար. — Աշխարել ...
- Անոյ՛. — Կոծել ...
- Կիպար. — Ո՞ր մէկն ըսեմ ...
- Անոյ՛. — Ո՞ր մէկն համբեմ ...

Կիպար. — Կակի ծառեր ցանդ գնիլ . . . յլում ի
 Անոյե. — Կիշանբուլ բեռնաւորութիլ . . . յլում
 Կիպար. — Կիտրիկի քամոսիլ . . . Կարսիլ
 յա Անոյե. — Մարտան ջուրի քամոսիլ ան-
 ցունել . . . յլում
 Կիպար. — Ախորժակէ գրկուել . . . Կարսիլ
 Անոյե. — Չկրնալ քնանալ քան . . . յլում ի
 Կիպար. — Հաղալ . . . Կարսիլ
 Անոյե. — Տքալ . . . յլում ի
 Կիպար. — Կիտրիկի քամոսիլ . . . Կարսիլ
 Անոյե. — Անուրիլ . . . յլում ի
 Կիպար. — Այս չէ բլլալիքը . . . յլում
 Անոյե. — Պարսիկ քանիլ բերանս . . . Կարսիլ
 ցլնեմ . . . այս մարդը չի համարուիր . . . յլում ի
 Պարսաւար. — Ես հերոսի կերիկներէն չեմ:
 Կիպար. — Պարսաւարիկն ալ չի կրնի ի վեր ի կեր-
 նէն բան մը չի կրնի անանք . . . Կարսիլ
 Անոյե. — Կ'սորտչեմ զի քանիկեր գլինքն որ
 հաշտուիլ վաճարիլ ետքոյնս անձ ընանք ի իրիկ
 գլինքն . . . մնտար շտք մարցալ մարտայ արքիլ ըմ
 Պարսաւար. — Երանիստ Կիպար Սիշտ անձ
 խատէ սա սիրականին անունն անրկելու: Կ'արձայ
 Հաշտութիւնն անկարելի է: Կ'արքալ խոտքեր մարիկ
 ընելու ժամանակ չունիմ . . . երթում փառքով քանս
 գտնելու և խնդիրը Գառուարանական Կիտրիկոյ
 ատեանը հանելու: Կ'ընկերիլ . . . Կարսիլ
 . . . յճառաճ . . . յլում ի
 . . . յճառաճ . . . Կարսիլ
 . . . յճառաճ . . . յլում ի
 . . . հմայ սիճե կ'Ո . . . Կարսիլ
 . . . հմայ սիճե կ'Ո . . . յլում ի

ՏԵՍԻՍԵՑ

ԿԻՊՐՈՍ ԵՎ ԱՆՈՅԵՒ

Կիպար. — Հիմա տնտեսական արձեւած է իր քիտուն
 մէջ արքաւոր կրատարի. ասպն չըլլիր կարծէ թէ Կիպար
 տնտեսական ինքնիշխան չի կրնի լինիլ անհաշտութիւն
 պիտի տար. ինքը կ'ըլլալ իր շահի համար ինչ որ ցանկ
 ընող պիտի չըլլալ ցանկանիլ չի կրնի. Կիպար ծառեր
 ւակնն է որ մենք համաձայնութեամբ քարծինք և
 իրարմէ զի բաժնու ինքն Տարակոյն ի կայ արքաներ
 պիտի կրնի իր մէջ արքան իր թէ անոյն օրն ընկերու
 էինք. Պայծառիս քան իր քիտու կարէ. ասպն ի մ'ալ
 սուամ պիտի լինի ինձ. քեզի հետ արքան իր անկար
 կատարակարգութիւնն ասպն գար ըմ . . . մնտար
 Անոյե. — Պարսաւարանն չի կրնի լինար ինքն իր
 միջառիկ կառու իր անձ իր անձ իր անձ իր անձ իր անձ
 Կիպար. — Պարսաւարաններու մեծ մասն արք
 դարութիւնն և իր անունը հոն կը դանկ ուր շատ
 անկի կը տեսնէ, ասկանց չեմ կարծիք որ Օգոստին
 այս մասին վերաբերի: Եթէ յաջողի իր իրեն ինձ
 համաձայնութիւնն մը գոյացնել, ալ չի կրնի ինչ
 դատիկ պաշտպանութիւնն ևս պիտի ստանան
 ասպն իր շարունակել խաղալ մեր խաղերը: Կիպար
 այժմէն վաստ բլլալու էք որ շատ արագ կար-
 ծիքը մեզի նպատակը պիտի ըլլալ: . . . մնտար
 Անոյե. — Սեծապէս շարունակալ և՛ սիրելիս
 որ կը խոստանաս քաջութեամբ պաշտպանել զիս
 և այս զոհողութիւնը կը կրկնապատկէ սերս գոր
 ունիլ ընդի համար . . . : սիտուպատար

Տ Ե Ս Ի Լ Թ.

ՆՈՅՆՔ ԵՆ ՕՒՍԷՆ

Օգսեհ. — Շատ յանդգնութիւն ցոյց կուտաք, տրիկի՛ն, ձեր անդորրութեան խանդարման պատճառ եզող անձն ձեր քովն պահելով նոյն իսկ այն վայրկենին ուր անհաւատարմութեան յանցանքով ամբաստանած դատարան ներկայանալու կոչնագիր պիտի ընդունիք: Փոխանակ արդարանալու միջոցներ փնտաւելու ձեր գործած ոճիրն հաստատելու ապացոյցներ կ'որոնէք: Մեծ յանդգնութիւն . . .

Կիպար. — Արդարանալու պէտք չունի, որովհետեւ յանցանք չունի . . .

Օգսեհ. — Եւ դուք բնտանիք մը փճացնելու աշխատելէն ու յաջողելէն ետքը տակաւին կը համարձակի՞ք ձեր լրբութիւնն աւելի առաջ տանելու:

Կիպար. — Շատ առաջ կ'երթաք:

Օգսեհ. — Ընդհակառակն, ետ կը մնամ. դուք իրմէ շատ աւելի յանցաւոր էք, որովհետեւ դուք գայթակղեցուցեր էք զինքն, հետեւաբար իրմէ շատ աւելի ծանր պատժոյ պիտի դատապարտուիք:

Կիպար. — (Խնդարով) Կը խնդրեմ, գլխացէք քիչ մը Տէր փաստարան . . . :

Օգսեհ. — Կը ծաղրե՞ս . . . դու միայն պիտի պատժուիս և պիտի աշխատիմոր տրիկինն բնաւ յանցանք չունենայ. այնպիսի դարձուածք մը պիտի տամ դատաւարութեանս որ բոլոր յանցանքը քու վրայ ծանրանայ և տասը տարի բանտարկութեան դատապարտուիս:

Կիպար. — Մեղք եմ, (խնդարով) չորս տարուան դատապարտել տուէք . . . :

Օգսեհ. — Դուքս հրամմէ՛ և մինակ թող զիս պաշտպանեալիս կնոջը հետ:

Կիպար. — Ո՛չ:

Օգսեհ. — Պաշտպանեալիս կինն իմ կինս ըսել է, դուքս ելի՛ր:

Կիպար. — Իմ հոգիս է այն . . . կը նախանձիմ:

Օգսեհ. — Ձեր խոստովանութեան հարկ չկայ, արդէն ապացուցուած և հաստատուած է այն. դուքս ելի՛ր և մի՛ ստիպեր զիս խիստ միջոցներու դիմել:

Կիպար. — Ո՛չ:

Անոյ՛. — Կը խնդրեմ, մի՛ կուռիք ինձի համար:

Օգսեհ. — Հարկ անհրաժեշտ է որ դուքս ելնէ անպատճառ, փաստարանական պարտքս կը պահանջէ որ քիչ մ'առանձին մնամ ձեզի հետ:

Կիպար. — Իմ պատիւս ալ կը պահանջէ որ բնաւ առանձին չմնաք անոր հետ:

Օգսեհ. — Ի՞նչ կը նշանակէ այս ընդգլխութիւնը . . . :

Տ Ե Ս Ի Լ Ժ.

ՆՈՅՆՔ ԵՆ ՊՍՂՏԱՍՈՐ

Պաղտասար: — Ի՞նչ է . . . ի՞նչ կայ . . . :

Օգսեհ. — Այո՛, առանձին տեսակցութիւն մ'անհրաժեշտ պէտք է:

Կիպար. — Առանձին տեսակցութիւն մը բնաւ հարկաւոր չէ:

Պաղտասար. — (Առ Կիպար) Անիկայ փաստաբան է, խիստ մի՛ խօսիր հետը:

Կիպար. — (Հրեոյ Պաղտասար) Դուն մի՛ խառնուիր, խնդիրը ուրիշ կերպարանք առած է:

Օգսէն. — Փոխանորդիս կի՛նն է, ինչո՞ւ թոյլ չես տար որ հետը խօսիմ երկու վայրկեան:

Պաղտասար. — (Առ Օգսէն) Ան ալ բարեկամ է, մի՛ վշտացնե՛ր...

Օգսէն. — (Հրեոյ Պաղտասար) Խնդիրը քեզ մէ ելած է, դուն մի՛ խառնուիր մեր գործին:

(Առ Կիպար) Դուրս պիտի ելնէք, եթէ ոչ...:

Պաղտասար. — (Առ Կիպար) Դիշ մը դուրս ելիր, նայինք, ի՞նչ պիտի ընէ...:

Կիպար. — (Հրեոյ Պաղտասար) Դուրս պիտի չեղնեմ բնաւ և կը հրամայեմ որ դուն ելնես դուրս...:

Օգսէն. — Հիմայ իմաց կուտամ առ որ անկ է:

Կիպար. — Եթէ աս բարով:

(Պաղտասար մէջ մը Կիպարի և մէջ մը Օգսէնի կերպայ և խօսիչ կ'ուզէ մեջերևի և հասնածայնութիւն գոյացնելու համար, և երկուքի և կ'ուզէ իրար կը մերժուի այն տեսիլի միևնույն վերջը):

Օգսէն. — Ի պարտ ու պատշաճ անորէնութիւն:

Կիպար. — Կոնսոկդ տեսնեմ,

Օգսէն. — Հետեւաբար և բնականաբար հետեւանքն չկրնար նպատատար ըլլալ քեզի համար:

Կիպար. — Բարեկամիս կի՛նն առանձին ձգելու եմ եզեր մեր մեծապատիւ փաստաբանին հետ:

Օգսէն. — Իմ նպատակս բարի է... (Առ Պաղտասար որ ուժով կը փաշեր քեռեկն) Գնա՛ սրկէ, Աստուածդ սիրես, դուն ի՞նչ քիթդ կը խօթես այս խնդրոյն մէջ. թո՛ղ տուր որ խօսիմ:

Կիպար. — Թող տուր որ փաստաբանն է, փաստաբանական պարտքը կը պահանջէ եզեր որ առանձին տեսակցութիւն մ'ունենայ եզեր պաշտպանական կնոջը հետ: (Առ Պաղտասար որ ձեռքով Կիպարի և քեռակը գոցել կ'ուզէ) Դու ի՞նչ կը խառնուիս մեր գործին, քեզի ի՞նչ, մենք կը կուտանք, կը հաշտուինք... քեզի բան մըսո՞ղ կայ. գնա՛ նանգլատդ նայէ:

Պաղտասար. — Թող չեն տար որ խօսիմ... հիմա պիտի ձայնիմ...:

Օգսէն. — (Առ Պաղտասար) Դառա՛ղ ինձի չը յանձնեցիր...:

Պաղտասար. — Այո՛:

Օգսէն. — Կի՞նդ:

Պաղտասար. — Այո՛:

Օգսէն. — Բանդ գնա՛ ուրեմն և մի՛ խառնուիր փոխանորդիդ գործերուն:

Պաղտասար. — Բայց... (Անոյ և Կիպար կը մեկնին):

Օգսէն. — Շատ լաւ, բայց գիտցիր որ չարաչար պիտի պատժուիս Պ. Կիպար. (դունեկ պրոտարով) տաններկու տարի բանտարկութիւն պիտի քաշես և յետոյ... յետոյ... ան ալ վերջը կը խորհինք:

Տ Ե Ս Ի Լ Ժ Ա.

ՊԱՂՏԱՍԱՐ ԵՆ ՕԳՍԷՆ

Պաղտասար. — Վազելով հեւալով եկայ լսելու համար կարեւոր յայտնութիւններն զոր ունէիք եղեր ինձի ընելու. կռուէն գլուխ չվերուցիք որ...:

Օգսէն. — Անպիտան քեզի, կեցիր դուն, կը սորվեցնեմ քեզի փաստաբանի մը հետ վարուելու եղանակը:

Պաղտասար. — Սա կարեւոր յայտնութիւններն...:

Օգսէն. — Անդգամ քեզի, ինձի հետ առանձին չե՞ս ձգեր Անոյշը ... մի՛ ձգեր, վերջը կը տեսնես:

Պաղտասար. — Պիտի ըսէ՞ք սա կարեւոր յայտնութիւններն...:

Օգսէն. — (Դեպի դուռը դառնալով) Լիրբ, ես պատուաւոր մարդ եմ, քեզի հետ խօսելու իսկ չէի զիջաներ ... (Մեկին ի մեկ դուռը վազելով եւ պոռալով) Սրիկա՛յ, ո՞վ կարծեցիր դուն ինձի, որ թող չտուիր քիչ մը տեսակցիլ տիկին Անոյշի հետ, քեզի պէս, անպատիւ կարծեցիր, քեզի պէս որ մտերիմ բարեկամիդ կնոջը հետ գաղտնի յարաբերութիւններ կը հաստատես, խեղճ կիրնը կը գայթակղեցնես, կը մոլորեցնես, հետը ուրիշին տունը կ'երթաս եւ ժամերով կը խմես, կ'երգես, կը պարես. ինքզինքդ գիտցար զիս, լիրբ թշուառակա՛ն, վատ...:

Պաղտասար. — Բարկութիւնը չանցաւ որ սա կարեւոր յայտնութիւններն իմանայինք:

Օգսէն. — Օձի պէս կը սողսկիք ամէն տուներու մէջ եւ որ տնէն որ ելնէ՛ք, այն տանն պատիւն ու խաղաղութիւնն ալ ձեզի հետ մէկտեղ կ'եկնեն, խաբեբա՛յներ, դաւաճա՛ններ...:

Պաղտասար. — Կ'աղաչեմ, հերիք է ա՛լ... սա կարեւոր յայտնութիւններն...:

Օգսէն. — Եթէ իշխանութիւն ունենայի՛ շրջութայներու տակ կ'ոչնչացնէի ձեզի պէս երիտասարդները: Ի՞նչ պատիւ կրնայ ունենալ քեզի պէս աւարած մ'որ տասը տարիէ ի վեր մտերիմ բարեկամիդ Պաղտասարին կիրնը կը սիրես, տասը տարիէ ի վեր:

Պաղտասար. — Պաղտասարի՞ն ... ի՞նչ կը լըսեմ ... տասը տարիէ ի վե՛ր...:

Օգսէն. — Ապուշին մէկը գտեր ես եւ ուղածիդ պէս խաղացեր ես, նենգաւոր:

Պաղտասար. — Ուրիշ Պաղտասար է... մէկէն ի մէկ կարծեցի թէ ես եմ ու...:

Օգսէն. — Եթէ ես ըլլայի Պաղտասար աղբարին տեղ, գքեզ բզիկ բզիկ կ'ընէի...:

Պաղտասար. — Պաղտասար աղբար ըսաւ ... չեմ հասկնար...:

Օգսէն. — Ինքնիրմէ անցած ու ցնդած մարդ մը խաբելը դժուար չէ. եկո՛ւր զիս խաբէ. թշուառական, չուռակա՛ն:

Պաղտասար. — Սա Պաղտասար աղբարն ո՞վ է արդեօք... ի՛նչ աւանակ մարդ է եղեր...:

Օգսէն. — Եւ սակայն օրինաց ամենէն խիտտրամադրութեանց համաձայն դատաւարտել պիտի

տամ զքեզ իբրև ոճրագործ և պիտի ջանամ փրկելի տիկին Անայը...

Պաղսասար. — (Պոսարով) Հերիք, պարոն փաստաբան, հերիք, մօտ եկուք որ զիրար հասկընանք...

Օգսեկ. — Յայտնութիւններ մնաց ընելու... ամեն բան յայտնուեցաւ արդէն, կնկանդ սիրականը Կրպարն է...

Պաղսասար. — Կրպար՞ը ըսիր:

Օգսեկ. — Այո՛, Կրպար: Սակայն հանդարտէ, անոր քթէն բերնէն պիտի հանեմ բոլոր բրածները: Արդէն շատոնց ի վեր քէնով էի հետը և ընտելի ակորժեր բռնած ընթացքէն. առիթը ներկայացաւ որ փաստաբանութեան բոլոր թոյները թափեմ վրէժս լուծելու համար իրմէ: Օ՛ն ուրեմն, գործի սկսինք: Նախ և առաջ՝ իմ ապառնի աշխատութեանցս փոխարէն հատուցանելի վարձուց քանակութիւնն որոշենք: Մենք փաստաբաններս սովորութիւն ունինք երեք վճարումով ընդունիլ մեր վարձքը. առաջին վճարումը կը կատարուի գործին սկիզբը, երկրորդը տեղի կ'ունենայ գործին միջոցը, երրորդը՝ գործին կատարածը...

Պաղսասար. — Կրպարն է ըսիք:

Օգսեկ. — Հետեւաբար պարտաւոր էք նախ յիսուն սակի վճարել, յետոյ միջոցին յիսուն սակին և ետքը կատարածին յիսուն սակին, ամբողջ գումար հարիւր յիսուն սակի որ չնչին գումար մ'է անհաւատարիմ կնիկէ մը բաժնուելի յաջողելու համար: Կը յուսամ թէ դուք անմեղ պիտի ելնէք դատարանէն և ձեր հակառակորդը պիտի կրէ

արժանապայել պատիժն. իսկ եթէ բոլոր ջանքերուս հակառակ չկարենանք մեր յուսացած արդիւնքն ձեռք բերել, այն ատեն ալ իրաւունք պիտի ունենամ իմ հարիւր յիսուն սակոց գումարն պահանջելու, ըստ որում աշխատութիւնս միշտ աշխատութիւն է...

Պաղսասար. — Սխալ չհասկնամ, կարծեմ Կրպար ըսիք, այնպէս չէ՞:

Օգսեկ. — Այո, Կէն ինի Կի, պէ այք բէ պար Կրպար...:

Պաղսասար. — Այ թշուառական... որո՞ւ մտքէն կ'անցնէր... ու ստար տարիէ ի վեր կը սիրէ եղբր...:

Օգսեկ. — Այո՛:

Պաղսասար. — Ո՞վ կը հաւատար:

Օգսեկ. — Ի՞նչ պիտի պատասխանէք առաջարկութեանս:

Պաղսասար. — Ի՞նչ պատասխանեմ... ապրիս, Կրպար, ապրիս...:

Օգսեկ. — Պատասխանելու է որ ըստ այնմ գործի սկսինք կամ չսկսինք:

Պաղսասար. — Ապրիս, շատ ապրիս, Կրպար:

Օգսեկ. — Հարիւր յիսուն սակի մեծ գումար մը չէ անհաւատարիմ սրտակիցէ մը և վատ մտերիմէ մը բաժնուելու համար:

Պաղսասար. — Այդ գումարով երեք կլին կ'առնուի, եղբայր:

Օգսեկ. — Իրաւունք ունիք, կլին մ'արձակելն աւելի սուղ է քան առնելը:

Պաղսասար. — Դոնէ վստահ էք թէ պիտի չահինք դատար:

Օգտեմ. — Շատ վատահ եմ. նրբացուցիչ դէպք
յանցանաց չունին բնաւ:


Պաղտասար. — Լաւ. բաւական է որ բաժնուծիմ
սա սատանայ կնիկէն:

Օգտեմ. — Աճապարեցէ՛ք ուրեմն առաջին վը-
ճարումն ընելու, որպէս զի նախնական գործողու-
թիւններն աւարտենք: Ինչպէս գիտէք այս գոր-
ծողութիւններն քիչ մը երկար են. աղերսագիրքը
նախ նախագահին կը մատուցուի որ նախաձեռ-
նութեան ատեանը կը յղէ, նախաձեռնութեան
ատեանը ձեռնհասութեան ատեանը կը յղէ, ձե-
ռնհասութեան ատեանը յարաբերութեան դիւանը
կը յղէ, յարաբերութեան դիւանը խմբագրութեան
դիւանը կը յղէ. խմբագրութեան դիւանը իրաւա-
սութեան դիւանը կը յղէ, իրաւասութեան դիւանը
տնտեսական դիւանին, տնտեսական դիւանն ու-
սումնական դիւանին, որմէ կ'երթայ Գա-
տաստանական խորհրդոյ որ խնդիրը քննելու
համար յանձնաժողով մը կը կազմէ, այս յանձնա-
ժողովն ալ խնդիրն ուսումնասիրելու համար մաս-
նաժողով մը կը կազմէ որ մասնախումբ մը կը
կազմէ խնդիրը մանրամասնօրէն սերտելու և տե-
ղեկագրելու համար, այս մասնախումբն ալ օժան-
դակ մասնախումբ մը կ'ընտրէ որպէս զի իրեն օգ-
նէ, այս օժանդակ մասնախումբն ալ իւր ճիւղերը
կ'ունենայ խնդիրն իւր քոյր ճիւղերովը քննելու
համար և այս ճիւղերուն իւրաքանչիւրն ալ մէյմէկ
մասնաճիւղեր կ'ունենայ որք խնդիրն իւր մասնա-
ճիւղերովը քննելէն վերջը կը յանձնեն իրենց ճիւ-
ղին, ճիւղն օժանդակ մասնախումբին, օժանդակ
մասնախումբն՝ մասնախումբին, մասնախումբն

մասնաժողովին և այսպէս խնդիրը կ'երթայ հոն՝
ուսկից ճամբայ ելած էր, յետոյ նորէն կուգայ
Գատաստանական խորհրդոյ ուր կը կատարուի
դատավարութիւնը: Երթա՛նք...:

Պաղտասար. — Աս ի՞նչ երկար ճամբորդու-
թիւն է...:

Վերջ առաջին արարքին



Գրք

ԱՐԱՐՔ ԵՐԿՐՈՐԳ

(Թասրոնը կը ներկայէ միտելոյն արահն: Աջ կողմը սեղան մը՝ կանայց աստիճով ծածկուած ու պզտիկ զանգակ մը, կաղանար, բուռք եւ գրիչ դրուած են սեղանին վրայ:)

S T U T L U.

ՊԱՂՏԱՍԱՐ յեսոյ ՕԳՍԷՆ

Պաղտասար. — Կինս անհաւատարիմ գտնուած է իւր պաշտօնին մէջ. իւր անհաւատարմութիւնն հաստատուած է. հետեւաբար և բնականաբար հարկ է որ բաժնուէնք իրարմէ և ըստ օրինի արտօնէք զիս ուրիշ կին մ'առնելու: Կինս անհաւատարիմ գտնուած է իւր պաշտօնին մէջ. իւր անհաւատարմութիւնն հաստատուած է. հետեւաբար և բնականաբար հարկ է որ բաժնուէնք իրարմէ և ըստ օրինի արտօնէք զիս ուրիշ կին մ'առնելու: Կինս անհաւատարիմ գտնուած է իւր պաշտօնին մէջ. իւր անհաւատարմութիւնն հաստատուած է. հետեւաբար և բնականաբար հարկ է որ բաժնուէնք իրարմէ և ըստ օրինի արտօնէք զիս ուրիշ կին մ'առնելու: Ահա Դատաստանական Խորհրդոյ առջեւ իմ ընկելք խօսքերս, ո՛չ բառ մ'աւելի, ո՛չ բառ մը պակաս. այսինքն՝ կինս անհաւատարիմ գտնուած է իւր պաշտօնին մէջ. իւր անհաւատարմութիւնն

հաստատուած է. հետեւաբար և բնականաբար հարկ է որ բաժնուէնք իրարմէ և ըստ օրինի...:

Օգսէն. — (Մտնելով) Դատաստանական Խորհրդոյ անդամներն տեսայ, չէ՞ղ ի հոս կը յառաջանան. դատք աղէկ սորվեցա՞ր:

Պաղտասար. — Զուրի պէս. կինս անհաւատարիմ գտնուած է...:

Օգսէն. — Լաւ: Խրատներուս համաձայն շարժելու ես:

Պաղտասար. — Այո՛:

Օգսէն. — Մազ մը խտտորելու չէ այն ճամբէն, զոր ցոյց տուի:

Պաղտասար. — Ո՛չ:

Օգսէն. — Այս եղանակաւ միայն կրնանք յաջողիլ:

Պաղտասար. — Հարկաւ:

Օգսէն. — Եթէ ուրիշ ընթացք մը բռնես՝ դատք կը կորուսես:

Պաղտասար. — Անտարակոյս:

Օգսէն. — Դատաւորներն կրնան քեզի պատ ի պատ հարցումներ ուղղել զքեզ ծուղակի մէջ ձգելու համար. դուն անոնց հարցումներուն պիտի պատասխանես այն խօսքերով միայն զորս սորվեցուցի քեզ:

Պաղտասար. — Այո՛: Կինս անհաւատարիմ գտնուած է իւր պաշտօնին մէջ. իւր անհաւատարմութիւնն հաստատուած է. հետեւաբար և բնականաբար հարկ է որ բաժնուէնք իրարմէ և ըստ օրինի արտօնէք զիս ուրիշ կին մ'առնելու:

Օգսէն. — Կեցցե՛ս:

Պաղտասար. — Շատ պատիւ պիտի ընեմ ի-

րենց, որդէս զի դատս աղէկ քննեն. խանուէ, գինի, անուշ, օղի, օշարակ...

Օգսեկ. — Կարծեմ կուգան ... եկան:

S E U H L F.

ՆՈՅՆԻ ԵՒ ՓԱՅԼԱԿ, ԵՐԿԱԹ, ՍՈՒՐ (Իրան առջև)

Փայլակ. — (Առ Երկար) Մտէ՛ք, կ'աղաչեմ:

Երկար. — (Առ Սուր) Կը խնդրեմ, անցէ՛ք:

Սուր. — (Առ Փայլակ) Առաջ դուք մտէք:

Փայլակ. — Ինձի չվայլեր ձեզմէ առաջ մըտնել:

Երկար. — (Առ Փայլակ) Պատշաճից օրէնքը կը պահանջէ որ ամենէն ետքը ես մտնեմ:

Սուր. — (Առ Երկար) Բնաւ երբէք, չենք ընդունիր:

Փայլակ. — (Առ Սուր) Դուք մտէք ուրեմն նախ և առաջ:

Սուր. — (Առ Փայլակ) Ձեմ ընդունիր, դուք ինձմէ նախապատիւ էք:

Փայլակ. — (Առ Սուր) Ձեր ազնուութիւնն է որ այսպէս կարծել կուտայ ձեզ:

Սուր. — (Առ Փայլակ) Ձեր ազնիւ զգացումներն են որ այդպէս խորհիլ կուտան ձեզ:

Փայլակ. — (Առ Սուր) Ձեր առ իս ունեցած համակրութիւնն է որ այնպէս խօսիլ կուտայ ձեզ:

Սուր. — (Առ Փայլակ) Ձեր զգացմանց փափկութիւնն է որ ...

Երկար. — (Առ Սուր) Ժամանակ չանցունենք, մտէ՛ք, կ'աղաչեմ:

Սուր. — (Առ Երկար) Դուք մտէք:

Երկար. — Ո՛չ, թո՛ղ Տէր Սուրը մտնէ:

Սուր. — Ո՛չ, թո՛ղ Տէր Փայլակը մտնէ:

Փայլակ. — Ո՛չ, ես կարգս գիտեմ:

Սուր. — Երեքնիս մէկէն մտնենք, ճ'ն: (Երեքը մեկեկ կը մտնեն եւ սեղանին առջև կուգան):

Փայլակ. — Նստելու համար ալ ժամանակ չանցունենք, կ'աղաչեմ: (Կը նստին):

Սուր. — (Առ Օգսեկ) Կարծեմ յայտարարուեցաւ ձեզ թէ ամուսնական դատերու մէջ փոխանորդութիւն չընդունուիր:

Օգսեկ. — Այո՛, պիտի մեկնիմ: (Կը մեկնի, բարեկերով Դասասանակրակ Խորհրդոյ անդամները):

Սուր. — Նախնական գործողութիւններ ունինք կատարելու. կրնաք դուրսը սպասել քիչ մը և ներս մտնել երբ զանգակին ձայնը լսէք: (Պաղտասար գրոխը ծռելով կը մեկնի):

Փայլակ. — (Առ Սուր) Դուք չըսիք ձեր կարծիքը:

Սուր. — Ոչ, որովհետեւ վիճաբանութիւնն ընդմիջելու ստիպուեցանք:

Երկար. — Ասանկ խնդրոց մէջ նախապաշարումներու շատ կարեւորութիւն տալու չէ:

Փայլակ. — Այո՛ւ ամենայնիւ այլոց վկայութեանց յենով՝ վճիռ ալ արձակելու չէ:

Երկար. — Ես կուսակցական ոգով չեմ շարժիր:

Փայլակ. — Ոչ ալ ես:

Երկար. — Խնդիրն սկզբունքի տեսակէտով քննելով բարկանալու իրաւունք չունէիք ինձի դէմ:

Փայլակ. — Սակայն դուք այն պիտի ակնարկուեթիւններ ըրիք որ արժանապատուութիւն վերաւորելու բնութիւն ունէին. հասկցնել կ'ուզէիք ինձ թէ կուրզկուրայն կը պաշտպանեմ այն կողմը:

Երկար. — Ամենեւին, շատ սխալ ըմբռնած էք իմ խօսքերուս իմաստը: Ես ըսի պարզապէս թէ ճերմակ գինին խնձորով կը խմուի, մինչդեռ սեր գեղձով աւելի ախորժելի է քմաց:

Փայլակ. — Եւ աւելցուցիք թէ սև գինիով խնձոր ուտողներն ճաշակէ դուրի են:

Սուր. — Ըստ իս ճաշակի խնդրոց մէջ ճշմարտութիւնն միշտ ծակամուտ կը պահուբարի. հետեւաբար երկու կողմն ալ կրնայ իրաւունք ունենալ: (Սոքրակ խախտէ կը հրակցնէ):

Փայլակ. — Իրաւունք ունէի ուրեմն երբ կը պօռայի թէ ճաշակի խնդրոց մէջ վճիռ արձակելն աղայութիւն է:

Երկար. — Ոչ. ես կը պնդեմ միշտ թէ գեղձով ճերմակ գինի չի խմուիր:

Փայլակ. — Ես ալ չեմ դադրիր պօռալէ թէ խնձորով ճերմակ գինի խմելու արամաղիր ոչ քի՛մք ունիմ, ոչ ստամոքս...:

Երկար. — Իրաւունք ունիք, և ես ալ կը ջանայի գձեզ համոզելու թէ ըստ ձեր քմաց ուրիշին քի՛մքը դատելու իշխանութիւն չունէիք:

Պաղտատար. — (Դրակ աղջեւ) Կարծեմ գանգակի ձայն մը...

Սուր. — Ո՛չ, նախնական գործողութիւններն չաւարտեցան տակաւին: (Պաղտատար կը մեկնի):

Փայլակ. — Ոչ ալ պարտաւոր էի ի՛մ քի՛մքս ձեր քմաց համաձայնեցնել:

Երկար. — Անտարակոյս. որչափ քի՛մք այնչափ գինի:

Փայլակ. — Որչափ խնձոր այնչափ քի՛մք:

Երկար. — Բայց մեծամասնութի՛ւնը...:

Փայլակ. — Մեծամասնութիւնն իմ քովս է:

Երկար. — Ոչ:

Փայլակ. — Այո՛:

Սուր. — Կ'աղաչեմ, փակեցէ՛ք այս խնդիրն:

Երկար. — Ո՛ւր լսուած է, եղբա՛յր, ճերմակ գինիով գեղձ ուտելը:

Պաղտատար. — (Դրակ աղջեւ) Մտնե՛նք:

Փայլակ. — (Ոսֆ ելնելով) Ինչո՞ւ կ'աճապարէք, ազգը մեզի ամսական չտար ձեր գործերը կարգադրելու համար. մենք ազգասիրաբար, անձնանուիրաբար յանձն առած ենք հոս գալու և ձեր խնդիրը քննելու: Մենք գործի տէր մարդիկ ենք, մենք գաւախներ ունինք որոնց ապրուստ և հագուստ հոգալու պարտաւոր ենք, և այսօր մեր գործերն երեսի վրայ թողլով եկած ենք հոս ձեր ամուսնական խնդիրը քննելու. մենք ձեր ծառան չենք, հասկցա՞ք. մենք ձեր գերին չենք, հասկցա՞ք. մենք ձեր ստրուկը չենք, հասկցա՞ք. դուք պարտաւոր էք մեզի երախտագէտ ըլլալ, սակայն մենք ձեր երախտագիտութիւնն ալ չենք ուզեր, այլ կը փափաքինք միայն որ ազատ թողուք զմեզ գործելու. համբերեցէ՛ք ուրեմն որ լինցնենք ատենական գործողութիւններն և ներս կանչենք զձեզ: (Պաղտատար կը մեկնի): Ես ճերմակ գինի կը խմեմ, եղբայր, օրէնքը կը դատապարտէ՞ ճերմակ գինի խմողները:

Երկար. — Ինչո՞ւ դատապարտէ, սիրելիս:

Փայլակ. — Ի՞նչ կ'ուզես ուրեմն :

Սուր. — Վերջացուցէ՛ք : Ատեանը բացուած է : (Գրպանեկն քուղքեր հանելով) Մեր գրասեղանի վրայ երեք թուղթ կայ : Առաջինն Տէր Կիպարի կողմէ արուած է : Այս թուղթով Տէր Կիպար կը բողբէ Տէր Պաղտասարի կողմէն յերկրուած զըրպարտութեան մը դէմ և պատիւ կը պահանջէ . Տէր Կիպար ամբաստանուած է եղեր Տէր Պաղտասարի կնոջ սիրականն ըլլալու յանցանօք : Երկրորդն ըստորագրուած է տիկին Անոյշէն որ չկրնալով հանդուրժել էրկան կողմէ յաճախ տեղի ունեցող գանակոծութեանց և յայտնելով միանգամայն թէ վերջին գանակոծութեամբ իւր թեւն կտորած է՝ կը խնդրէ որ էրկին երաշխաւորութեան ներքեւ դրուի , երաշխաւորութիւն մ'որ ապահովէ տիկինն թէ չպիտի սպաննուի էրիկէն : Երրորդն է Տէր Պաղտասարին որ իւր կնոջ անբարոյականութեան մէջ գանուելն յայտնելով կ'ուզէ որ արձակէ զայն և ուրիշ կին մ'առնու : Ըստ իս առաջնութիւն տալու է Տիկին Անոյշի խնդրագրոյն որ թէև երկրորդ է թուական կարգաւ , ըստ որում մահու և կենաց խնդիր է : (Սողակն անուշ կը բերէ :

Երկար. — Այո՛ , շատ աղէկ ամփոփեցիք խընդիրները :

Փայլակ. — Ամփոփում մ'որ ամեն ինչ մանրամասնօրէն կը պատմէ . համառօտ ընդարձակութիւն մը . . . :

Սուր. — (Զանգալը հնչեցնելով) Տէր Պաղտասար և Տիկին Անոյշ ներս գան :

Տ Ե Ս Ի Լ Գ .

ՆՈՅՆՔ ԵՆ ՊԱՂՏԱՍԱՐ , ԱՆՈՅՆ (նախ բեր կապած)

Սուր. — Նստեցէ՛ք : Տէր Պաղտասար , յանձնաժողովոյ անդամներս որ անդամ ենք նաև Դատաստանական Խորհրդոյ , կը փափաքինք լսել ձեր արդարացուցիչ փաստերն այն ընթացից մասին որով վարուած էք ձեր կնոջ հետ , ընթացք մ'որ գլխովին հակառակ է դարուս ոգւոյն , ընթացք մ'որ երբէք չկրնար արդարանալ քաղաքակիրթ աշխարհին առջեւ , ընթացք մ'որ պատուաւոր մարդու չվայլեր , ընթացք մ'որ կը դատապարտուի ամեն կարգի խիղճերէ , վերջապէս ընթացք մ'որ ամենուն ահ ու սարսափ կ'ազդէ : Ի՞նչ պիտի պատասխանէք Տէր Պաղտասար :

Պաղտասար. — Կինս անհաւատարիմ գտնուած է . . .

Սուր. — Լուէ՛ : (Սողակն օշարակ կը բերէ) :

Փայլակ. — Լեզուդ քեզի քաշէ :

Երկար. — Խորհրդարանական լեզուով խօսէ՛ :

Սուր. — Ի՞նչ հարկ ստիպեց զքեզ ձեծել զինքըն և թեւը կտորել :

Պաղտասար. — Իւր անհաւատարմութիւնն հաստատուած է :

Սուր. — Խնդրէն դուրս կ'եղնէք :

Երկար. — Խնդրէն մի՛ շեղիր :

Փայլակ. — Խնդրէն մի՛ խտորիր :

Սուր. — Եւ մի միայն քեզի ուղղուած հարցումներուն պատասխան տուր :

Պաղտասար — Հետեւաբար և բնականաբար հարկ է որ բաժնուէինք իրարմէ և ըստ օրինի արտօնէք զիս ուրիշ կին մ'առնելու :

Անոյց. — Մեծադատիւ Տեարք, ես կը ներեմ իրեն, միայն կը խնդրեմ որ երաշխաւորութիւն մը տայ ապագային մէջ այսպիսի ընթացքի մը մէջ չգտնուելու համար :

Սուր. — Ի՞նչ վեհանձնութիւն :

Երկար. — Չգացմանց ի՞նչ փափկութիւն :

Փայլակ. — Ի՞նչ հեղուցութիւն :

Սուր. — Եւ ասանկ ընտիր կիներն բարբառոսներու ձեռք կը մնան ընդհանրապէս : Վա՛հ, Տէր Պաղտասար, վահ որ ասանկ կին մ'առնիս և երջանկութիւնդ չես զգար :

Պաղտասար. — (Մեկրայի) Եթէ չճաթիմ՝ ազէկ :

Սուր. — Այս վայրկեանէս աշխատէ՛ երաշխաւոր մը գտնել. եթէ ոչ այս սուներ մտնելու չես : Երկար. — Այո՛ :

Փայլակ. — Իմ կարծիքս ալ այս է :

Պաղտասար. — Կինս անհաւատարիմ գրտնուած է իւր պաշտօնին մէջ :

Սուր. — Քեզի քանի քանի անգամ ըսուեցաւ որ անձնականութեան չդարձնես խնդիրն :

Երկար. — Ի՛ կարգ հրաւիրեցէ՛ք զինքն :

Պաղտասար. — Իւր անհաւատարմութիւնն հաստատուած է :

Փայլակ. — Խնդրէն դուրս խօսիլն արդէլեալ է :

Պաղտասար. — Հետեւաբար...

Սուր. — Մի՛ խօսիր :

Պաղտասար. — Եւ բնականաբար...

Սուր. — Խօսք չունիս :

Պաղտասար. — Հարկ է որ բաժնուէինք իրարմէ...

Սուր. — Խիստ միջոցներ ձեռք առնելու պիտի ստիպուիմ :

Պաղտասար. — Եւ ըստ օրինի արտօնէք զիս...

Սուր. — (Զանգակն ու ժգնակի հնչեցնելով) Լռէ՛...

Պաղտասար. — Ուրիշ կին մ'առնելու... կինս անհաւատարիմ...

Սուր. — Քանի մը վայրկեան դադար : (Անդալ սեկեակը կը փաշտիկն) :

Պաղտասար. — Գտնուած է իւր պաշտօնին մէջ. իւր անհաւատարմութիւնն հաստատուած է. հետեւաբար և բնականաբար հարկ է որ իրարմէ բաժնուէինք և արտօնէք զիս ուրիշ կին մ'առնուլ :

Անոյց. — (Բարձրաձայն) Այ... ա՛յ... ա՛յ... օգնութիւն...

Տ Ե Ս Ի Լ Դ.

ՆՈՅՆՔ ԵՒ ԿԻՊԱՐ

Սուր. — Ի՞նչ է, ի՞նչ եղաւ :

Անոյց. — Ա՛հ... ա՛հ...

Փայլակ. — Ի՞նչ ունիք, տիկին :

Անոյց. — Ա՛հ... սիրտս...

Երկար. — Ի՞նչ կ'զգաք, տիկին :

Անոյց. — Ա՛հ, ա՛հ, ա՛հ, սիրտս...

Սուր. — (Մեկրայի) Էրկանը ըսած խօսքերուն չկրցաւ հանդուրժել խեղճը և մարելիք եկաւ վրան :

Անոյ՛. — Ա՛հ, ա՛հ, ... մազ մնաց որ...

Սուր. — Որ...

Փայլակ. — Մազ մնաց որ... ի՞նչ:

Անոյ՛. — Մազ մնաց որ... ա՛հ...

Երկար. — Որ... ի՞նչ պիտի ըլլար:

Անոյ՛. — Որ...

Սուր. — Լաւ, որ... ի՞նչ...

Անոյ՛. — Որ... ա՛հ... որ...

Երկար. — Որքէն անդին չկրնար ըսել որ:

Փայլակ. — Մազ մնաց որ... վերջը:

Անոյ՛. — Որ... որ... պիտի...

Սուր. — Պիտի... ի՞նչ...

Անոյ՛. — Պիտի...

Սուր. — Ի՞նչ պիտի...

Անոյ՛. — Խղճէր զիս, ա՛հ...

Կիպար. — Ի՞նչ անդթուլիւն:

Փայլակ. — Ի՞նչ բարբարոսութիւն:

Անոյ՛. — Ա՛հ... ա՛հ... ա՛հ...

Երկար. — Տէր Պաղտասար, ձեր յանցանքն

երթալով կը բազմապատկուի և ծանրակշիռ կեր-

պարանք կ'առնու: Ի՞նչ իրաւունք ունիք վայրե-

նաբար վարուելու այս խոնարհ ու համեստ կնոջ

հետ: Ինչո՞ւ համար խղճել կ'ուզէք զինքը:

Պաղտասար. — Ո՞վ կ'ուզէ խեղդել զայն:

Սուր. — Դուք:

Պաղտասար. — Ե՞ս:

Փայլակ. — Ուրանա՞լ կը ջանաս:

Երկար. — Ամենուս առջեւ կատարուած իրու-

ղութիւն մ'է:

Սուր. — Եթէ մեր ներկայութեանն այսպէս

գաղանաբար յօշոտել կ'ուզես զինքն, ո՞վ գիտէ

ինչե՛ր չես ընէր առանձին եղած ժամանակնիդ:

Փայլակ. — Մեղք, մեղք, հազար մեղք, Տէր

Պաղտասար:

Պաղտասար. — Սուտ է, սուտ... Ես իրեն

դպած չունիմ:

Անոյ՛. — Ա՛հ... ա՛հ...

Պաղտասար. — (Առանձին) Աս ի՞նչ դժոխա-

յին կնիկ է եղեր:

Անոյ՛. — Ա՛հ... ա՛հ...

Սուր. — Յանուն մարդասիրութեան կ'աղաչեմ

ձեզ, Տէր Կիպար, որ սա խեղճ կինն առնէք և

սա սենեակը տանիք որ քիչ մը հանգստանայ. չէ՞ք

տեսներ, նստելու կարողութիւն չունի: Կ'աղաչեմ

քիչ մը խնամք տարէք:

Երկար. — Ես ալ կը ինդրեմ յանուն գթու-

թեան որ քովէն չբաժնուիք զի մի գուցէ վայրենի

գաղանն նորէն վրան յարձակի:

Փայլակ. — Կը յուսամ թէ մեր երեքին սի-

րոյն համար յանձն կ'առնէք այս նեղութիւնն:

Անոյ՛. — Ա՛հ... ա՛հ...

Կիպար. — (Վարանկերոյ) Բայց ... կարծեմ

թէ...

Սուր. — Վարանկերու ժամանակ չէ, կ'աղաչեմ

չուտ ըրէք: (Կիպար վերցնելով Անոյը կը սսնի:)

Դուրը գոցեցէ՛ք:

Երկար. — Եւ դուն հոս պիտի մնաս, մինչեւ

որ ելնենք, անպիտան: (Սենեակը կը խաշուի:)

Փայլակ. — Տեղէդ չպիտի հրերաս, գաղան:

(Սենեակը կը մտնի:)

Սուր. — Հոս մեր ելնելուն պիտի սպասես

վայրենի': (Սենեակը կը մտնի):

Տ Ե Ս Ի Լ Է.

ՊԱՂՏԱՍԱՐ (Առանձին)

Ըսելիք չմնաց, առ բոլոր դռները գոցեց: Անպիտան, գազան, վայրենի եղայ. ինչո՞ւ, որովհետև անհաւատարիմ կիսէ մը բաժնուել կ'ուզեմ: Սակայն ի՞նչ որ ըսեն, ի՞նչ որ ընեն միշտ իմս է իրաւունքը. պիտի յայտնուի անշուշտ թէ այդ լիբը կ'նոյ՞ ո՛չ թեւը կ'տրած եմ, ո՛չ ալ խղզել ուզած եմ զինքը: Չպիտի յուսահատիմ բնաւ և պիտի աշխատիմ հաստատել թէ այդ կիսն խորամանկ է, ստախոս է և անբարոյական. պիտի ջանամ, նոյն իսկ մեծ կորուստներ ընելով բաժնուել այդ օձէն: Մեր փաստարանէն ալ բան մը չհասկցայ որ ...

Տ Ե Ս Ի Լ Զ.

ՆՈՅՆ ԵՒ ՍՈՂՈՄԷ (Խոհանոցի հագուստով)

Սողոմե. — Ի՞նչ կայ, ի՞նչ եղաւ, ի՞նչ եղեր է...

Պաղտասար. — Ոչինչ:

Սողոմե. — Ի՞նչպէս ոչինչ ... դրացիներն դուռն ափ առին, ներս մտան ու խոհարան եկան ինձ հարցնելու թէ ո՛վ մարեր էր: Մեր խոհանոցէն ալ բան մը չլսուիր որ ... ո՛վ մարեցաւ ... չըլլայ որ տիկինը մարի ... ո՛ւր է տիկինս ... տիկինս ո՛ւր է ... ինչո՞ւ չես պատասխաներ, տիկինքս կ'ուզեմ ես ...

Պաղտասար. — Գլուխդ փարատի տիկինդ:

Սողոմե. — Ո՛ւր է տիկինը:

Պաղտասար. — Գործդ գնա՛, չիմայ սաքիս տակը կ'առնեմ գլուխդ ու հոգիդ կը հանեմ:

Սողոմե. — Բան մ'ալ չես կրնար ընել:

Պաղտասար. — Խոհանոցդ գնա՛ ու գործդ նայէ՛:

Սողոմե. — Ո՛չ:

Պաղտասար. — (Բարձրաձայն) Խօսքս մտիկ պիտի ընե՞ս թէ ոչ:

Սողոմե. — (Պոսպոյ) Չե՞ս խայնիր, չե՞ս ամբշնար ...:

Տ Ե Ս Ի Լ Է.

ՆՈՅՆՔ ԵՒ ՓԱՅԼԱԿ, ԵՐԿԱԹ, ՍՈՒՐ, ԿԻՊԱՐ, ԱՆՈՅՇ

Սուր. — Ի՞նչ եղաք նորէն ...

Սողոմե. — Անգամ մը գլխուդ մազերուն ձերմակութեանը նայէ՛ ...

Փայլակ. — Ի՞նչ պատահեցաւ:

Սողոմե. — (Միշտ առ Պաղտասար) Ես քուկին գիտցած կիներէդ չեմ, իսկըդ գլուխդ ժողզէ՛, չը խպնա՛ծ, պատկերի պէս կին մ'ուսիս և կ'ենես ուր չ կիներու կը քսուիս. ո՛վ գիտցար դուն ինձի ...

Երկար. — Աս ի՞նչ է, Տէր Պաղտասար:

Սողոմե. — Կնիկ կայ կնիկ ալ կայ, չամբշնացա՛ծ, ամեն կնիկ մէկ չէ:

Սուր. — Աս ալ նոր տեսարան :

Պաղտասար. — Ասոնց ամենը խօսք մէկ ըրած են այսօր զիս զրպարտելու : (Առ Սողոմէ) Ո՞վ քսուեցաւ քեզի , անզգամ :

Սողոմէ. — Ո՞վ պիտի քսուի . ինչու թեւս կը կամթանս ...

Պաղտասար. — Պապանձէ՛ , ստախօս , և հիւ մա դուրս ելիր տունէս , չեմ ուզեր քեզի :

Սողոմէ. — Տեղ մ'ալ չեմ երթար , ես տիկնոջս հրամանին միայն կը հնազանդիմ . ամեն օր է աս , ամեն օր , քաշուելու բան չէ ա՛լ ... «Սողոմէ՛ , քեզի համար կը խենդենամ , Սողոմէ՛ , քեզի շատ կը սիրեմ , Սողոմէ՛ , քեզի նոր կօշիկ պիտի ապսպրեմ . Սողոմէ՛ , ամսականդ պիտի աւելցընեմ ...» : Չեմ ուզեր ո՛չ կօշիկդ ո՛չ դքեդ կ'ըսեմ , կը ձգեմ , կը փախչիմ , ետեւէս կուգայ , թեւէս կը քաշէ : Մինչեւ այսօր պահեցի ...

Պաղտասար. — Ի՞նչ խօսեր են ասոնք :

Սողոմէ. — Մէկու մը բան չըսի , բայց շիմաց որ տեսայ թէ խեղճ կինդ կը չարչարես , ա՛լ չկըրցի համբերել , անամօթ մա՛րդ : (Կ'երթայ) :

Տ Ե Ս Ի Լ Ը .

ՊԱՂՏԱՍԱՐ, ՓԱՅԼԱԿ, ԵՐԿԱԹ, ՍՈՒՐ, ԿԻՊԱՐ, ԱՆՈՅՇ

Սուր. — Ծշմարիտը խօսելով չկրցինք վայելցնել ձեզի որ գեղեցիկ կին մունենալով զիջանէիք այդ սպասուհւոյն քծնիլ :

Փայլակ. — Շիտակը մարդուս հաւտալիքը չգար :

Սուր. — Ի՞նչ որ է , փակենք այս խնդիրն ալ և ատեանը բանանք : (Զանգակը հնչեցնելով) Ատեանը բացուած է . խօսքը ձերն է , Տէր Կիպար :

Կիպար. — Տէր Պաղտասար այնպիսի զրոյցներ տարածեր է հրապարակի վրայ որք պատիւս արատաւորելու և զիս մարդկային ընկերութեանց մէջ մտնելու անարժան էակ մը ցոյց տալու հանգամանքն ունին : Կը խնդրեմ , հարցնէիք Տէր Պաղտասարին թէ երբ ըսած եմ իրեն թէ իւր կիւնը կը սիրեմ :

Սուր. — Խօսքը ձերն է , Տէր Պաղտասար :

Պաղտասար. — Ի՞նչքը պիտի ըսէր թէ կը սիրէ կինս :

Սուր. — Կի՞նդ ըսաւ :

Պաղտասար. — Ո՛չ :

Սուր. — Ո՞վ ըսաւ ուրեմն :

Պաղտասար. — Վատահամբաւ տան մը մէջ զիրար սիրելի հաստատեցինք :

Սուր. — Վկայներ ունի՞ք : Ո՞վ տեսած է ասոնց զիրար սիրելը :

Պաղտասար. — Ո՛վ տեսած է :

Սուր. — Այո՛ :

Պաղտասար. — Վատահամբաւ տան մը մէջ ...

Սուր. — Վատահամբաւն բաւական չէ . դօրաւոր ապացոյցներ պէտք է հաստատելու համար Տէր Կիպարի յանցանքն , և մենք համոզուելու ենք որպէս զի ըստ այնմ որոշենք անօրինուելիք պատիժը :

Կիպար. — Կը խնդրեմ որ պահպանէք պա-

տիւս, և մաքրէք զիս սարսափելի արատէ մը :
Ինքը ուրիշ կնոջ հետ կարգուելու համար ազատ
է զրպարտել իւր կինն իբրև անհաւատարիմ և
կինն ալ կարող է ինքզինքն պաշտպանել . բայց
չեմ ընդունիր որ ասանկ զրպարտութեան մը գոր-
ծիք ըլլամ : Հատուցում կը պահանջեմ : Գոնէ ե-
րեք հարիւր սակի տալու է ինձ որ սրբուիմ այս
աղաէն :

Սուր. — Ի՞նչ պիտի պատասխանէք :

Պաղտասար. — Վատահամբաւ տան մը մէջ
ի՞նչ գործ ունէր կնոջս հետ :

Կիպար. — Ատ ալ զրպարտութիւն մ'է :

Սուր. — Կամ հաստատել պէտք է ինչ որ
կ'ըսէք կամ գոհացնել Տէր Կիպարը :

Պաղտասար. — Լուծայ մը չեմ կարող տալ :

Կիպար. — Ուրեմն ետ առէք ձեր խօսքն և
ներումն ինդրեցէ՛ք :

Պաղտասար. — Ո՛չ :

Կիպար. — Գիտնալ պէտք է սակայն թէ այ-
լոց պատիւն ձեր խաղալիքը չէ :

Պաղտասար. — Ոչ ալ իմս այլոց :

Երկար. — Պարապ խօսքերով ժամանակ մի
անցունէք . մենք ալ գործ ունինք պիտի երթանք ,
մենք ամսականով չենք , մեր տղաքներն հաց կ'ու-
զեն իրիկուան :

Փայլակ. — Այո՛ , այո՛ , շուտ մը հաշտուեցէ՛ք
լմնայ երթայ :

Կիպար. — Պատիւ կը պահանջեմ :

Պաղտասար. — Պատիւն ետ կը պահանջեմ :

Երկար. — Ուշ մնացինք :

Փայլակ. — Դուն անոր ձակտէն համբուրէ ,

ան ալ քու : ձեռքդ պագնէ , գործը չերկարի :
Պաղտասար. — Կիես անհաւատարիմ գտնը-
ւած է :

Սուր. — Խնդիրը հիմա Կիպարի վրայ է :

Երկար. — Կիպար անանկ տղայ չէ . . . ես
զինքը պզտիկուց կը ճանչնամ , հայրն ալ ազնիւ
մարդ մ'է , Դերենիկ կ'ըսեն :

Փայլակ. — Ի՞նչ կ'ըսես , Դերենիկին տղա՞ն է :

Երկար. — Այո :

Փայլակ. — Կը ճանչնամ , ազնիւ ընտանիք .
մայրն ալ ազնուական տոհմէ սերած է :

Երկար. — Անգիւտ ընտանիք մ'է :

Փայլակ. — Ի՞նչ կ'ընէ հայրդ , աղէ՞կ է :

Կիպար. — Աղէկ է , իւր յարգանքները կը
մատուցանէ :

Փայլակ. — Ի՞նչ ըրաւ ձին :

Կիպար. — Կը պահէ :

Փայլակ. — (Առ Երկար) Ձի մ ունի որ տես-
նելու արժանի բան է , սքանչելի ձի մը , գեղեցիկ
ձի մ'որ շողեկաւքի հետ կրնայ մրցել : (Առ Կիպար)
Քանի՞ տարեկան է հիմա այդ ձին :

Կիպար. — Ութը լմնցուց ինը պիտի մտնայ :

Փայլակ. — Քալած ժամանակը կը ցատկէ՞
միշտ :

Կիպար. — Այո՛ :

Փայլակ. — Անոր վրայ կայնիլն քիչ մը դըժ-
ւար է . բայց հօրդ համար աշխարհիս ամենէն դիւ-
րին բանն է . չիտակը ետ կը վախնում : (Առ Սուր)
Յատկած ժամանակը տասը կանգուն վեր կը բարձ-
րանայ և քսան կանգուն անդին կը նետէ ինքը-
զինքը : Շատ աղէկ ձի մ'է : (Առ Կիպար) Քանի՞
առած է այդ ձին :

Կիպար. — Քսան եւ հինգ ոսկիի :
Փայլակ. — Բայց այսօր եթէ ծախելու հանէ՝ կար-
ծեմ քառասուն ոսկի կուտան : Տէր Պաղտասար ,
տեսա՞ծ էք այդ ձին :

Պաղտասար. — Տեսած եմ : (Մեկուսի) Այդ սատկե-
լիք ձիուն խօսքն ո՞վ հանեց :

Փայլակ. — Ի՞նչպէս է :

Պաղտասար. — Աղէկ է : (Մեկուսի) Ստանան
տանի :

Փայլակ. — Այդ ձիով նապաստակ որսալու
երթալու է : (Առ Պաղտասար) Նապաստակ կերած
ունի՞ք :

Պաղտասար. — Ո՛չ :

Փայլակ. — (Առ Երկար) Կ'ըսեն թէ միսը քիչ
մը թթու է :

Երկար. — Այո՛ , անհամ է . բայց եթէ աղէկ
համեմուի՝ կ'ուտուի :

Սուր. — Ես բնաւ կերած չունիմ : Դուք կե-
րած ունի՞ք , Տէր Երկար :

Երկար. — Ոչ , քանի մ'անգամ լորամարդի
կերած եմ :

Կիպար. — Ատոր միսը պատուական է :

Փայլակ. — Եփելուն վրայ է գործը :

Սուր. — Բնականաբար եթէ խնամով պատ-
րաստուի . . . :

Երկար. — (Առ Պաղտասար) Ժամավաճառ չըլ-
լանք , ի՞նչ պիտի պատասխանէք , պիտի յամառի՞ք
ձեր պահանջմանց մէջ թէ պիտի հաճիք հաշտու-
թեամբ վերջացնել այս խնդիրն :

Կիպար. — Ես իւր անձնականին հետ բան
չունիմ . կը յարգեմ զինքն իբրև բարի և պատ-

ուաւոր մարդ , այսու ամենայնիւ կը պահանջեմ
որ խնդիրն ըստ օրինի քննուի և իւր լուծումն
ստանայ :

Սուր. — Տէր Պաղտասարն ալ բարի մարդ
է , ան ալ կը յարգէ զձեզ . կ'երեւի թէ թիւրիմա-
ցութիւն կայ ձեր մէջը :

Պաղտասար. — Ի՛նչ թիւրիմացութիւն . . . աչ-
քերովս տեսայ . . .

Սուր. — Թիւրատեսութիւն ուրեմն . . .

Փայլակ. — Կարծեմ թէ վրան քիչ մ'ալ գինի
կը սրկեն եփ ելած ժամանակը :

Երկար. — Հաշտուեցէ՛ք , հաշտուեցէ՛ք , Տէր
Պաղտասար :

Կիպար. — Անկարելի է :

Սուր. — Կը խնդրեմ , քիչ մը դուրս ելէ՛ք և
առանձին թողէ՛ք զմեզ որ խորհրդակցինք : (Կի-
պար , Պաղտասար , եւ Անոյշ մեկնելու վրայ) : Յանձ-
նաժողովս կը խնդրէ Տէր Պաղտասարէն որ դուր-
սը խելօք նստի և նորէն չյարձակի տիկնոջը վրայ :
(Կ'եղկեն) :

Տ Ե Ս Ի Լ Թ .

ՓԱՅԼԱԿ , ԵՐԿԱԹ , ՍՈՒՐ , յետոյ ՍՈՂՈՄԻ :

Փայլակ. — Օ՛ն , ժամավաճառ չըլլանք , աչ-
խատինք դարմանելու այն վիսան զոր մենք ըրինք
այսօր բացակայ գանուելով մեր վաճառատունէն :
Օգուտ քողենք ուրեմն այս կորսուած օրէն և ջա-
նանք արդիւնաւորել զայն :

Մարթա . — (Դուռսեկն) Կոռւարար :

Պաղտասար . — (Դուռսեկն) Ի՞նչ կայ ... ինչո՞ւ կը քաշկռտէք զիս ... թո՞ղ տուէք օձիքս :

Տ Ե Ս Ի Լ Ժ .

ՆՈՅՆՔ, ԹԱԳՈՒՀԻ, ՄԱՐԹԱ, ԵՒ ՊԱՂՏԱՍԱՐ

Թագունի . — (Պաղտասարին քեռեկն փաշեղով) Եկուր սա մեր գործը մաքրէ՛ :

Պաղտասար . — Ի՞նչ գործ :

Սուր . — Ինչո՞ւ կը պօռաք, տիկիներ, ի՞նչ կ'ուզէք :

Թագունի . — Տանս խաղաղութիւնն աւրեց, պօռալու բան է, Պաղտասար աղբար, սուտ չպիտի խօսիս :

Մարթա . — Եղածին պէս պատմէ թո՞ղ, ի՞նչ իրաւունք ունիս տանս դուռն ափ առնելու և փողոցէն անվայել խօսքեր ընելու ինձի :

Թագունի . — Կ'ընեմ ա՛, աղջիկս ձեռքէս պիտի ելլայ : Ըսէ նայիմ, Պաղտասար աղբար, այս կնկան հետ կարգուելու միտք ունիս եղեր :

Պաղտասար . — Ե՞ս :

Մարթա . — Պաղտասար Աղբար, դուռն չէիր տարիէ մի վեր ինձի խոստացողն թէ ... :

Պաղտասար . — Ե՞ս ... :

Մարթա . — Դուռն, դուռն, ինչո՞ւ կը պահես կոր :

Պաղտասար . — Ուրիշ մէկը չըլլայ :

Մարթա . — Ո՛չ, դուռն ես :

Պաղտասար . — Ես տեղեկութիւն չունիմ :

Թագունի . — Եթէ տեղեկութիւն չունիս՝ չուտըրէ ուրեմն երթանք մեր տունը, որովհետև աղջիկս կը մարի կը մարի կ'երթայ :

Պաղտասար . — Ինչո՞ւս պէտք իմին :

Թագունի . — Հապա որո՞ւն ինչուն պէտք է . գնա՛ համոզէ զինքը ըսելով թէ սուտ է այդ լուրն, թէ իրեն ըրած խոստումներուդ վրայ հաստատ ես :

Պաղտասար . — Ի՞նչ խոստում :

Թագունի . — Զգիտնալէն մի՛ գար, աշխարհ արարատ գիտէ որ աղջիկս պիտի առնես : Շուտըրէ՛, երթանք : (Թեւեկ փաշեղով) :

Փայլակ . — Ի՞նչ յայտնութիւններ :

Պաղտասար . — Աղջի՞կդ մի պիտի առնեմ :

Մարթա . — (Պաղտասարին քեռեկն փաշեղով) Անիկայ իմ ապագայ ամուսինս է :

Տ Ե Ս Ի Լ ԺԱ .

ՆՈՅՆՔ, ԿԻՊԱՐ, ԱՆՈՅՇ, ՍՈՂՈՄԷ (Օղի բերելով)

Թագունի . — Ոչ, իմ ապագայ փեսաս է :

Մարթա . — Չէ, իմ ապառնի էրիկս է :

Պաղտասար . — Աս ի՞նչ դժոխային սուտեր են ... թո՞ղ տուէք զիս . ա՛լ խայտառակութիւն է ձեր ըրածը ... :

Սուր . — Հիմա կը հասկցուի թէ ինչո՞ւ կը զրպարտէ ու կ'ամբաստանէ իւր սնմեղ կիներ :

Փայլակ. — Ապրիս, Պաղտասար աղբար, ապրի'ս :

Պաղտասար. — Մի' հաւտաք, սուտ է անոնց ամեն ըսածը, աս կնիկներն որչափ կը սիրեն եղեր զիրար ... կնոջը անբարոյականութեան դէմ բողոքողը կանանց բանակ մը կը յարուցանէ եղեր իրեն դէմ :

Թագուհի. — Ասոնք աւելորդ խօսքեր են ... տուն երթանք, սա աղջիկս խալսենք, բժիշկ պիտի բերես ի՞նչ պիտի ընես, ըրէ', վահ աղջիկս, (շարյ) վահ աղջիկս ... :

Մարթա. — Թող չեմ տար որ երթայ, ես սէր տուած եմ իրեն, անիկայ իմն է ... Աստուած գիտէ, եթէ տեսնամ որ տունդ կ'երթայ ... չեմ ապրիր ... կը մեռնիմ (շարյ), անմիջապէս կը մեռնիմ ... :

Անոյշ. — (Մարտրոյ) Ահ ... :

Սուր. — Պաղտասար աղբար, վերջ տալու է այս տեսարանին :

Թագուհի. — (Լարոյ) Երթա՛նք, սիրելի փեսայուս :

Մարթա. — (Լարոյ) Մի' երթար, սիրելի մեծաւորս :

Փայլակ. — Գոհացուր զիրենք և վերջացուր այս խայտառակութիւնը. գաւաթ մ'օղի խմեցի, քիթէս բերնէս հանեցիր :

Պաղտասար. — Սուտ է ըսածնին :

Կիպար. — Որքան կիներ խաբեր է ... դուրսէն բարի մարդ մը կ'երեւար :

Երկար. — Պաղտասար աղբար, արդարանալու յոյս չմնաց քեզի համար : Արդարութիւնը չի

խղճուիր, պարսպ տեղ մի' աշխատիր ինքզինքդ արդարացնելու. յանցանաւոր ես դուն :

Մարթա. — (Լարոյ) Ինչո՞ւ համար յանցանաւոր ըլլայ, միթէ երկրորդ անգամ կարգուիլը յանցանք է :

Թագուհի. — (Լարոյ) Ժամանակ չանցունենք, երթանք :

Պաղտասար. — Կորսուեցէ՛ք, գնացէ՛ք աչքիս առջեւէն : (Կը փախի տեսարակի տեսարանէն) Մարթա եւ Թագուհի կը հարստենան Ասանկ բան ալ գլխուս բնաւ եկած չունէր ... (Պոռարոյ) Ես կարգուելու չեմ, կարգուելու ժամանակ չունիմ : (Տեսարանէն դուրս կը փախի, Մարթա եւ Թագուհի անոր ետեւէն կը վազեն) :

Կիպար. — (Յած առ Անոյշ) Շատ աղէկ կատարեցին իրենց դերը :

Անոյշ. — (Յած առ Կիպար) Իբրև առաջին կարգի գերասանուններ :

(Պաղտասար տեսարան կը մտնէ վազելոյ, ետեւէն Մարթա եւ Թագուհի) :

Պաղտասար. — Ազատեցէ՛ք զիս այս կնիկներու ձեռքէն, պիտի սպաննեն զիս :

Սուր. — Տիկիններ, չափն անցուցիք, ըստ օրինի ներկայացուցէ՛ք ձեր խնդիրն Խորհրդոյս, որ արդարութեամբ քննէ և իմաստասիրէ ձեր գործը :

Թագուհի. — Շատ լաւ. գիտէք արդէն թէ որքան ծանր բան է անփորձ աղջիկ մը խաբելը :

Մարթա. — Հարկաւ մեզմէ աղէկ գիտեն թէ որքան ամօթալի բան է իմ տարիքիս կին մը գըլխէ հանելը :

Պաղտասար. — Ո՛հ, գլխէ հանել . . . :

Անոյ՛՛. — Շատ, շատ կը ցաւիմ ականատես ըլլալուս համար տեսարանի մ'որ կենացս կէսն ըս-
պառեց :

Փայլակ. — Հոգ մի՛ ընէք, տիկի՛ն, ամեն բան կ'անցնի և կը մոռցուի :

Անոյ՛՛. — Զգացում և պատիւ ունեցող կրն-
կան մը համար շատ դառն է տեսնել իւր ամուս-
նոյն խայտառակութիւնները : (Վազեթը) Պաղտասար-
ը կը գրկէ) Կը ներեմ քեզի : (Սյեղը կը արքէ) :

Սուր. — Այս դառն է մանաւանդ Անոյ՛՛ի մը :

Պաղտասար. — Ես չեմ ներեր քեզի որ միակ
պատճառ ես ըլլոր այս սատանայութեանց :

Փայլակ. — (Ոսֆի ելնէր) Ամենքդ ալ նստե-
ցէ՛ք, լաւ խորհուրդ մը յղացայ : Ատեանն արդէն
շատոնց փակուած է . . . :

Թագուհի. — Բայց իմ գործս . . . :

Մարթա. — Հապա իմի՞նս . . . :

Փայլակ. — Դուք ձեր խնդիրներն գրով ներ-
կայացուցէք մեզի և վստահ եղէք որ անաչառու-
թեամբ պիտի քննուին :

Թագուհի. — Ո՞սք կուտա՞ք ուրեմն :

Երկար. — Այո՛ :

Մարթա. — Շնորհակալ ենք :

Կիպար. — Ի՞մ խնդիրս :

Փայլակ. — Ձեր խնդիրն կրնաք վերջացած
համարել, յայտնի է թէ անդամոցս կարծիքներն
նպաստաւոր են ձեզ : Արդ ատեանը փակուած է . . . :

Կիպար. — Թոյլ տուէ՛ք ուրեմն իմ շնորհա-
կալութիւնս և երախտագիտութիւնս յայտնել այն
ուղղութեան համար որով պատուարժան յանձնա-

ժողովդ վարուեցաւ, խնդիրն պարագայներովն
քննեց և արդարութիւնն երեւան բերաւ :

Անոյ՛՛. — Ձեմ կարող բառ գտնել երախտա-
գիտական զգացումներս յայտնելու այն անաչա-
ռութեան և անկողմնակալութեան համար որմէ
առաջնորդուեցաւ պատուարժան յանձնաժողովդ
և գիտցաւ տկար էակի մը անմեղութիւնն ի լոյս
բերելու. կենացս մինչև վերջին շունչը շնորհա-
պարտ պիտի մնամ ձեզ :

Փայլակ. — Շնորհակալ ենք ձեր արտայայ-
տած զգացումներէն և կը խոստանանք միեւնոյն
ուղղութեամբ ընթանալ մինչև դատին վերջը :

Պաղտասար. — Իմ թուղթս ի՞նչ եղաւ :

Սուր. — Ձեր թուղթը յաջորդ նիստին :

Փայլակ. — Թող չտուիք որ յղացած խորհրդ-
դոյս ծնունդ տամ : Քանի որ հոս ներկայ են չորս
այր և չորս կին, պատճառ մը չունինք, կարծեմ,
չպարելու : Ի՞նչ կ'ըսէք :

Երկար. — Սքանչելի խորհուրդ :

Սուր. — Ընտիր գաղափար :

Փայլակ. — Պէտք չէ մոռնալ սակայն թէ այս
պարն պաշտօնական հանգամանք չպիտի ունենայ :

Երկար. — Ի հարկէ :

Անոյ՛՛. — Մեծ անքաղաքավարութիւն կ'ըլլար
մեր կողմէն եթէ մերժէինք պատուարժան յանձ-
նաժողովոյդ սոյն առաջարկն. կարծեմ տիկիներն
ալ կը հաճին ընդունիլ ձեր հրաւերն :

Սուր. — Կոչում կ'ընեմ ուրեմն տիկնանց սո-
քերուն ազգասիրական զգացմանց և կը խնդրեմ
որ ընդունին մեր հրաւերն :

Երկար. — Ո՞վ պիտի նախագահէ պարին :

Մաղսասար. — (Ինկնիրեն) Գործ ունեցի՛ր և ասոնց յանձնէ՛ :

Սուր. — Պաղտասար աղբարն աւելորդ է, ան ալ կրնայ հանդիսական ըլլալ եթէ կը բաղձայ :

Մաղսասար. — Ես ոչ հանդիսական կ'ուզեմ ըլլալ, և ոչ ալ պարական, ես կ'ուզեմ որ գործըս մաքրուի, կինս պատժուի :

Սուր. — Տէր Երկաթն որ լաւ պարող մ'է, կը նախագահէ պարին :

(Պարը կ'սկսի եւ սառը վայրիեանի մեջ կը վերջանայ. պարի ժամանակ կիսար դիտանալը Պաղտասարին՝ որ կը շրջի տեսարանիկ վրայ՝ ոտքը կը կոխէ կամ կը քաղիսուի ակնոր դեմ եւ ներումն կը խնդրէ):

Մաղսասար. — (Պարի միջոցիկ մերթ ընթմերթ ընկնաւորով) Որո՞ւ մտքէն կ'անցնէր թէ այս տեսակ զրպարտութիւններ պիտի ըլլային իմ վրայ... անխիճեալ ըլլայ այն օրն ուր այս դժոխային կընկան հետ կարգուեցայ, ինչո՞ւս պէտք իմին կարգուիլ... կարգուիլն ի՞նչ ըսել է... աշխարհ մը տանք... մտանք և անանկ մտանք որ դուրս ելնելն անկարելի է... ա՛ւ քեզի աշխարհ ու նստէ՛... կարելի բան չէ... առնել նստիլ այս կնիկը, անկարելի է... եթէ չկրնամ ապացուցանել... բայց ոչ, պիտի ապացուցանեմ... իսկ եթէ չկրնամ՝ կրօնքս կը փոխեմ, կամ հովովէական կ'ըլլամ կամ բողոքական, ձեռքէս ուրիշ ի՞նչ կուգայ... կամ քաղաքը կը թողու՞մ կը փախչիմ... ա՛հ, կնիկներ, ա՛հ... բողոքովին զգուեցայ ձեզմէ՛... կը վախնամ կոր... կնիկ մը տեսնելուս պէս դող կուգայ կոր վրաս...

կը վախնամ կոր... հապա սա օձ կինն որ կ'ըսէ թէ աղջկանը խօսք տուած եմ... հապա միւսն... խոֆածն... ցնդածն... յիսուն տարու կայ և գլխէ հաներ եմ եղեր զինքը... հապա մեր Սողոմէ խաթունը... ասոնց ամենն ալ կիսարին վարպետութիւններն են, միւսս չունի... կին ունեցողն համբերող ըլլալու է... վհատելու չէ, հարկաւ պիտի հաստատեմ թէ այս կանանց խօսքերուն ականջ կախելու չէ, թէ զրպարտիչ են անոնք, թէ Անոյշին յանցանքը թեթեցնելու կամ պարտկելու համար չինուած են... իրենց խելքովն որպէս թէ նրբացուցիչ դէպք յանցանաց պիտի գտնեն... թո՛ղ ընեն ի՛նչ որ կ'ուզեն. եթէ արդարութիւնն վերցած չէ աշխարհէս անպատճառ պիտի յայտնուի իմ անմեղութիւնս... անխիճեալ պարն ալ դեռ չլմնցաւ որ քանի մը խօսք ընէի սրտնց... :

(Պարը կը վերջանայ եւ պարոյժի քեր քերի պտտիչ կ'սկսի):

Թագուհի. — (Սո Երկար) Երկար ատեն չեմ կրնար մնալ, ձեր սիրոյն համար ընդունեցի պարը, կ'աղաչեմ որ թողուք զիս երթալ և աղջկանս յուզմունքն հանգարտեցնել :

Երկար. — Կրնաք երթալ, Պաղտասար աղբարին թեւը կ'առաջարկեմ ինձի համար : (Պաղտասարին հետ քեր քերի կ'սկսի պտտիչ):

Մաղսասար. — Համբերութիւն, ուրիշ ճար չկայ :

Թագուհի. — Տեսաք իմ, ահա կ'երթամ ես վստահելով միմիայն ձեր ազգասիրական զգացմանց և յուսալով թէ՛ պիտի պաշտպանէք խեղճ աղջկան մը դատը :

Սուր. — Հանդարտ եղէք: (Թագունի կը մեկ-
նի):

Փայլակ. — Բաժակ կ'առաջարկեմ տիկին Ա-
նոյշի կենացը համար:

(Առեկնի կը խմել բացի Պաղատարէ):

Երկար. — Դուք ինչո՞ւ չէք խմեր, Պաղտա-
սար աղբար, քաղաքավարութիւնը կը պա-
հանջէ...:

Սուր. — Ոչ թէ կը պահանջէ այլ կը հրա-
մայէ...:

Երկար. — Չմերժել գաւաթն որ կ'առաջարկուի
ի կենդանութիւն ձեր տիկնոջ, մանաւանդ այն-
պիսի մէկ տիկնոջ որու շնորհիւ միայն կրցած էք
բարձր ընկերութեանց մէջ մուտ գտնել...:

Սողոմե. — Խօսիլ սորվիլ:

Երկար. — Տիկնոջ մ'որ ձեր փառքն ու պար-
ծանքն աւելցուցած է:

Սողոմե. — Պարել սորվեցուցած է:

Երկար. — Տիկնոջ մ'որ իւր դաստիարակու-
թեամբն և կրթութեամբն զձեզ երջանիկ ըրած է:

Սողոմե. — Հագուիլ սորվեցուցած է:

Երկար. — Տիկնոջ մ'որ ի բաց վանելով այն
ամեն հաճոյքներն և զուարճալիքներն զորս իւր
գեղեցիկութիւնն, երիտասարդութիւնն, հրապոյրն
լիարուսն կ'ընձեռեն իրեն՝ շատացած է այն վիշ-
տերով զորս պատճառած էք և դեռ կը պատճա-
ռէք:

Սողոմե. — Ձեան պէս սպիտակ ...

Երկար. — Տիկնոջ մ'որ ...:

Սողոմե. — Ձեան պէս սպիտակ շապիկներ
հագցուցած է:

Երկար. — Տիկնոջ մ'որ վերջապէս անգին
գանձ մ'է ձեզի համար, ուստի կը հրաւիրեմ որ
խմես իւր կենացը:

Պաղատար. — Շնորհակալ եմ իւր ըրած ծա-
ռայութիւններէն և կը բարեմաղթեմ որ ձեր կինն
ալ անանկ ծառայութիւններ ընէ ձեզի, բայց գինի
չեմ կրնար խմել: (Մեկուսի) Ծառայութիւններ...:

Սուր. — Պատշաճից օրէնքն կը պահանջէր որ
խմէիք, ձեր այս վարմունքով կը հաստատէք ձեր
տիկնոջ անմեղութիւնը:

Փայլակ. — Կը խմեմ ի կենդանութիւն ներ-
կայից:

Երկար. — Կը խմեմ ի կենդանութիւն բացա-
կայից:

Անոյշ. — Բաժակ կ'առաջարկեմ պատուար-
ժան յանձնաժողովոյ անդամոց օրերուն երկարու-
թեանը համար: (Կը խմել):

Կիպար. — Օ՛ն խմենք յանձնաժողովոյ մեծա-
պատիւ անդամոց օրերուն երկարութեանը համար:
(Կը խմել):

Սուր. — Մեկնելու ժամ է:

Փայլակ. — Այո՛, երթանք:

Սուր. — (Առ Պաղատար) Դուք մինչեւ որ ե-
րաշխաւոր մը ցոյց տաք չէք կրնար այս տան մէջ
մնալ:

Երկար. — Եւ այս վայրկիսէն դուրս ելնելու
էք:

Պաղատար. — Ինչո՞ւ, տունն իմա չէ՞, ո՞վ կը
խառնուի այս տունին:

Սուր. — Չեմ կարծեր որ ստիպէք դմեզ խիստ միջոցներու դիմելու:

Անոյց. — Ես ետ կ'առնեմ խնդիրս և կ'աշխատիմ միջոց մը գտնել խնդրինքս պաշտպանելու իւր յարձակմանց դէմ:

Սուր. — Շատ լաւ, ահա կը մեկնինք մենք:

S E U H L ժ Բ.

ՊԱՂՏԱՍԱՐ, ԱՆՈՅՇ, ՄԱՐԹԱ, ՍՈՂՈՄԷ

Մարթա. — (Խնդարով) Հահ, հահ, հահ...

Պաղտասար. — Ինչո՞ւ կը խնդաս:

Սողոմէ. — Հահ, հահ, հահ...:

Անոյց. — (Խնդարով) Հահ, հահ, հահ, ինչո՞ւ կը խնդաք:

Պաղտասար. — Աներեաներ: (Երեկը մեկին կը խնդաւ) Չամչցածներ, լիբբեր... ս'ւհ...:

Սողոմէ. — Դիւրի՞ն է կին մը զրպարտել և աշխարհի առջև ծաղր ու ծանակ ընել: Գնա տիկնոջդ ձեռքը համբուրէ՛, հաշտուէ՛ հետը, եթէ ոչ դեռ շատ կը քաշես. կինը թողուլ ուզողն շատ խողերու պատրաստուելու է: (Կը մեկնի):

Մարթա. — Մնաք բարով, Պաղտասար աղբար, ի տեսութիւն (Կը մեկնի):

Պաղտասար. — Դժոխք:

Անոյց. — Երկնից շնորհն կը հայցեմ քեզի համար և կ'աղօթեմ որ երկինք իմաստութիւն շնորհէ քեզ որպէս զի խելքդ գլուխդ ժողովես և

հասկնաս թէ՛ այս ճամբան անել է, թէ՛ կինդ անմեղ է, թէ՛ ուղեղի հիւանդութիւն մը երեւակայել կուտայ քեզ թէ՛ կիպարը կը սիրեմ:

Պաղտասար. — Ուղեղի հիւանդութիւն չունիմ ես:

Անոյց. — Իբրոջութիւնը հակառակը ցոյց կուտայ: (Կը մեկնի):

S E U H L ժ Գ.

ՊԱՂՏԱՍԱՐ, յԵՏՈՅ օԳՍԷՆ

Պաղտասար. — Աղէկ, աղէկ, աղէկ անդամութիւն, աղէկ յանձնաժողովութիւն... ձի... նստաստակ, լորամարզի... ձերմակ գինի... խնձոր... սև գինի... դեղձ... գինի... օղի... ապուխտ... պար... ցատկառուք... ասիկայ պարզապէս պարահանդէս եղաւ... և ասանկ մարդիկ իմ դործս պիտի քննեն և անօրինութիւն պիտի ընեն... կարելի չէ չյուսահատիլ, բայց յուսահատիլն ալ հնար չէ... ամեն սատանայութեանց, ամէն խողերուն կը հաւատան և արդարութիւնն երեւան եկած կը համարին, ի՞նչ տեսակ արդարութիւն է աս... խելքս չպառկեցաւ...:

Օգսեհ. — Ի՞նչ լուր:

Պաղտասար. — Աղէկ լուր:

Օգսեհ. — Գործերը յաջող են, այնպէս չէ՞:

Պաղտասար. — Յաջող են:

Օգսեհ. — Ի՞նչ հասկցար գործոց ընթացքէն:

Պաղսասար. — Գործոց ընթացքէն սա հաս-
կըցայ որ մենք չպիտի կրնանք գլուխ ելնել այս
կնկան հետ :

Օգսեհ. — Ինչո՞ւ. միթէ չկրցի՞ր հաստատել
թէ կինդ անհաւատարիմ գտնուած է իւր պաշտօ-
նին մէջ, թէ... :

Պաղսասար. — Իւր անհաւատարմութիւնն
հաստատուած է, հետեւաբար և բնականաբար
և այլն և այլն... :

Օգսեհ. — Ուրեմն :

Պաղսասար. — Պարել, ցատկել, օղի խմել... :

Օգսեհ. — Չեմ հասկնար, չըլլայ որ սխալ
խօսք մը փախցուցած ըլլաս բերնէդ :

Պաղսասար. — Սօսիլ չտուին արդէն որ սը-
խալ խօսք փախցուցած ըլլամ :

Օգսեհ. — Իրենց արժանապատուութի՞ւնը վի-
րաւորեցիր :

Պաղսասար. — Ոչ :

Օգսեհ. — Իմ հրահանգացս համաձայն չչար-
ժեցար :

Պաղսասար. — Շարժեցայ :

Օգսեհ. — Հոգ մի՛ ընեք ուրեմն, անկարելի
է որ կորսնցնենք այս դատը : Մասնաճիւղն քըն-
նեց այսօր միւս խնդիրն և կարծեմ թէ նպաստա-
ւոր է մեզի : Իմացածիս նայելով պիտի տեղե-
կազրէ թէ Կիպար Անոյչի հետ գտնուած է այն
վատահամբաւ տան մէջ :

Պաղսասար. — Իրա՞ւ կ'ըսէք :

Օգսեհ. — Վայրկեանէ վայրկեան լուր կը
սպասեմ :

Պաղսասար. — Կարծես թէ քիչ մը սիրտս

բացուեցաւ. ա՛հ, հոս ըլլալու էիք և տեսնէիք
ինչե՛ր դարձաւ... :

Օգսեհ. — Ինչե՞ր :

Պաղսասար. — Վերջը կը պատմեմ, միայն
սա չափն ըսեմ քեզի որ կրներէն վախնալ սկսայ...
կին մը տեսնելուս պէս կարծես գլխուս վրայ
պաղ ջուր կը թափեն... :

Օգսեհ. — Համբերութիւն և յարատեւու-
թիւն... սոսնկ դատեր չահելն շատ դիւրին չէ :

Տ Ե Ս Ի Լ Ժ Գ.

ՆՈՅՆՔ ԵՆ ՍՈՒՐ

ՍՈՒՐ. — Ի դիմաց յանձնաժողովոյ պատիւ
ունիմ ձեզ հաղորդելու թէ վաղը հոս պիտի գըթ-
նուինք վերջնական որոշում տալու համար ձեր
խնդրոյն որ ուրիշ գոյն առաւ :

Պաղսասար. — Ի՞նչ գոյն առաւ :

ՍՈՒՐ. — Մ'ընչև հիմայ ունեցած գոյնը փո-
խեց, աւելին չեմ կրնար ըսել. վստահ եղէք որ
մենք արդարութիւնը պիտի պահպանենք :

Պաղսասար. — Շնորհակալ եմ :

ՍՈՒՐ. — Յանձնաժողովոյս սոյն որոշումն
հաղորդուեցաւ նաև ձեր կնոջ. որոշում մ'որ փո-
ղոցի վրայ արուեցաւ մասնաճիւղին տեղեկագրին
եզրակացութեան վրայ և զոր գրով հաղորդելու
համար ժամանակ կը պակսէր, պաշտօնապէս գի-
տէք ուրեմն այժմ թէ վաղը հոս պիտի գումար-
ուինք :

Պաղսասար. — Բարի եկաք, հաղար բարի :

Տ Ե Ս Ի Լ Ժ Ե .

ՊԱՂՏԱՍԱՐ, ՕԳՍԷՆ

Պաղտասար. — Արդարութիւնն չիմա յայտուեցաւ :

Օգսէն. — Ըստ մեր պայմանագրութեան պարտաւոր էք ուրեմն այսօր վճարել ինձ յիսուն ոսկի եւս, որովհետեւ վճռագիրն վաղը պիտի տրուի :

Պաղտասար. — Մազ մնաց որ պիտի դատաւարաւէին զիս :

Օգսէն. — Ուրախ եմ որ յաջող են գործերը. կրնա՞ք հատուցանել ինձ երկրորդ վճարումն, յիսուն ոսկին . . . :

Պաղտասար. — Այնչափ աճապարելու հարկ չկայ : Երթանք քիչ մը զուարճանալու :

Օգսէն. — Երթանք, ոչ թէ զուարճանալու այլ խորհրդակցելու համար այն ուղղութեան վրայ զոր պարտիք ունենալ վաղը, բայց սա յիսուն ոսկւոյ գործը . . .

Տ Ե Ս Ի Լ Ժ Զ .

ՆՈՅՆՔ ԵՆ ՍՈՂՈՄԷ

Սողոմէ. — Ինչ որ ըսէք, ինչ որ ընէք, անօգուտ է, աշխին Անոյ՛ն անմեղ է, հասկցա՞ք, դառնիճներ :

Պաղտասար. — Լռէ՛, ճնճո՛ց :

Սողոմէ. — Շատ ստակ ունիս նէ՛ տուր աս մարդուն :

Պաղտասար. — Բոլոր ստակս աս մարդուն պիտի տամ :

Օգսէն. — Պատիւ կը պահանջեմ :

Պաղտասար. — Ատոր խօսքին ականջ մի՛ կախեր, անիկայ խենդ է :

Օգսէն. — Մա յիսուն ոսկին, կ'աղաչեմ :

Պաղտասար. — Թող չէք տար որ ազատ չունչ մ'առնեմ, յիսուն ոսկին տանք պիտի :

Օգսէն. — Շնորհակալ եմ : Դուք ալ հարկաւ շնորհակալ էք դատը վաստկած ըլլալնուդ համար :

Սողոմէ. — Դատը մենք վաստկած ենք :

Պաղտասար. — Կրնա՞մ վստահ ըլլալ թէ վաստկեցանք :

Օգսէն. — Այո՛ : Բարեհաճեցէ՛ք, կ'աղաչեմ, սա յիսուն ոսկին :

Սողոմէ. — Մեղք ոսկիներուն . . . գտեր են ապուշ մը՝ կը կթեն ու կը կթեն :

Օգսէն. — Չէք պատասխաներ յիսուն ոսկւոյ մասին :

Պաղտասար. — Ի՞նչ պատասխանեմ :

Օգսէն. — Եթէ այդ գումարը չիմայ չվճարես՝ կրնդ կ'արդարացնեմ և զքեզ դատապարտել կուտամ :

Պաղտասար. — Եկուր տամ, եղբայր :

Սողոմէ. — Քսակդ տուր իրեն լմնայ երթայ :

Վերջ երկրորդ արարին

ԱՐԱՐՔ ԵՐՐՈՐԴ

Տ Ե Ս Ի Լ Ա.

ԿԻՊԱՐ, ՊԱՂՏԱՍԱՐ

Կիպար. — Չեմ կրնար ցաւս և զարմանքս չյայտնել այն պաղ ընդունելութեան վրայ որով կ'ընդունիք զիս քանի մը ժամանակէ հետէ, և անկարող մեկնելու ձեր այս պաղ վարմունքն՝ միշտ կը հարցնեմ խղճիս թէ Պաղտասար աղբաւրին բարեկամութիւնը նպաղեցնելու բնութիւն ունեցող յանցանք մը գործած եմ արդեօք և խղճէս ո՛չ պատասխանը կ'ընդունիմ...

Պաղտասար. — Խիղճդ քեզմէ աւելի անաւօթ և դուն խղճէդ աւելի լիբբ:

Կիպար. — Էսէ՛, կ'ալաչեմ, ի՞նչ պատճառներ կը հարկադրեն զքեզ անվայել լեզու գործածել մտերիմ բարեկամի մ'որ աշխատած է միշտ ամբապնդելու քեզի հետ ունեցած բարեկամութեան կապերը...

Պաղտասար. — Ամբապնդելով... կապերը ամբապնդելով... ա՛յ, անզգամ, լուծելու ըսէ՛ սրւոր, քակելու ըսէ՛ սրւոր... դաւաճա՛ն...:

Կիպար. — Մեծապէս կը սխալիք եթէ կը կարծէք տակաւին թէ հեղինակն եմ կարծեցեալ յանցանքին. բնաւ չէք խորհիր որ արդարութիւնն երեւան պիտի գայ և ամօթապարտ պիտի ընէ զձեզ:

Պաղտասար. — Այո՛, հարկաւ երեւան պիտի գայ:

Կիպար. — Եւ պիտի համոզուիք թէ Կիպար անմեղ է:

Պաղտասար. — Եւ հասարակութիւնն պիտի հասկնայ թէ Կիպարի պէս մեղաւոր մարդ չկայ աշխարհիս վրայ:

Կիպար. — Ըստ ձեր կարծեաց գլխատուելու մարդ մ'եմ ես, այնպէս չէ՞...:

Պաղտասար. — Ողջ ողջ կրակի մէջ նետուելու գաղան մ'ես...:

Կիպար. — Կը ցաւիմ թէ հին մարդոց պէս կը խորհիք և ձեր կարծիքներն բնաւ չեն համապատասխաներ դարուս լուսաւորութեան ոգւոյն: Պաղտասար աղբար, եթէ ձեր կեոնջ սիրականն իսկ ըլլայի՛ բնաւ պարտականութիւն չունէի մարսել ձեր լեզուն որ արժանապատուութիւնս կը վիրաւորէ: Դիցուք թէ սիրած եմ ձեր կինն, բայց քեզի ի՞նչ բրած եմ որ անձնականութեանս կը դստչիս. գիտնալու էիք թէ դարուս ոգին կը դատապարտէ անձնականութիւն վիրաւորելը: Ես մինչև այսօր կը յարգեմ ձեր անձն և կը փափաքիմ իսկ որ մեր բարեկամութիւնն անեղծ մնայ:

Պաղտասար. — Տունս կը քանդես և կը յարգե՛ս իմ անձս...:

Կիպար. — Ո՞վ կ'ըսէ թէ կը քանդեմ ձեր տունը, ենթադրելով թէ կը սիրեմ ձեր կինն ուրիշ բան մ'ըրած չեմ ըլլար այլ պարզապէս սկզբունք մը պաշտպանած կ'ըլլամ, բայց այս սկզբունքը ձեր սկզբանց կը հակառակի եղեր. միաս չունի, թող սկզբունքները կուռին...:

Պաղտասար. — Սկզբունք:

Կիպար. — Այո՛, պէտք է, Պաղտասար աղբար, անհրաժեշտ պէտք է ժամանակիս յառաջդիմութեան հոսանքին մէջ նետուիլ եթէ կ'ուզենք հանգիստ ապրիլ: Տասնեւիններորդ դարն ողջ ողջ կրակի մէջ նետուելու չդատապարտեր այն երիտասարդն որ իւր մտերիմ բարեկամին կինը սիրելու կը դատապարտուի բնութենէ: Դարուս քաղաքակրթութիւնն կ'որոնէ այն պատճառներն որոնց համար երիտասարդն ստիպուած է իւր բարեկամին կինը սիրելու...:

Պաղտասար. — Այդ ազուր խօսքերը պահէ՛ Դատաստանական Խորհրդոյ առջև զրուցելու համար, անպիտան... կինս գլխէ կը հանես, աշխարհի առջև զիս ծաղր ու ծանակ կ'ընես, տունս կը կործանես և առանց ամչնալու կ'ըսես թէ ըսկըզբունք մը կը պաշտպանես...:

Կիպար. — Այո՛, և այս փաստերս կը յայտնեմ զքեզ յաւելուս համար, զքեզ համոզելու համար որ ետ քաշուիս այդ դատէն ուր քեզի համար յաջողութեան բնու յոյս չկայ... ի տեսութիւն...:

S T U T F.

Պ Ա Ղ Տ Ա Ս Ա Ր , Ե Ն Ն Ե Ն Ս Տ Մ Ն

Պաղտասար. — Պիտի սորլիս դուն սկզբունք պաշտպանելը... այսչափ ալ աներեսութիւն բը-

նաւ տեսած ու լսած չունէի... թէ որ ես ասանկ յանցանք մը գործէի, Աստուած մի՛ արասցէ, փողոց ելնելու պիտի ամչնայի... աս հիմակուան երիտասարդներն շատ կարեւորութիւն չեն տար կոր ամչնալու... գողութիւն ալ կ'ընեն կոր և բարեգործութիւն ընողներէն աւելի ազատ, ուրախ և զուարթ կը մտնեն կոր ընկերութեանց մէջ... դարուս ոգին ասանկ կը պահանջէ եղեր...:

Օգտեմ. — Ի՞նչ ջուրի վրայ են գործերը:

Պաղտասար. — Ինչպէս որ գիտէք: Մասնաժողովոյ անդամներն պիտի գա՛ն, խնդիրը պիտի քննեն և պիտի տեղեկագրեն Դատաստանական Խորհրդոյ ուր պիտի ներկայանանք դատուելու համար:

Օգտեմ. — Շատ լաւ: Թէպէտե վաստկած ենք դատն, այսու ամենայնիւ պէտք չէ գոռօզանալ և խիստ լեզու գործածել Մասնաժողովոյ անդամոց: Հարկ է շոյել, ողտքել զիրենք մեղմ և անոյշ բացատրութիւններով, նամանաւանդ պէտք է այսուհետե անոնց սրտին դիմել և ոչ թէ մտքին: Սրտի դիմողներն ունայնաձեռն ետ չեն դառնար: Ուստի հարկ չկայ այլեւս փաստաբանելու, ազալելը հերիք է: Ուրեմն երբ ներկայանան հոս՝ անմիջապէս կը ծնրադրէք անոնց առջև ու աղերսանաց, չեծութեան, հառաչանաց ձայնիւ կ'աղաղակէք և կ'ըսէք կականարերձ. «Տիարք իմ, կոչում կ'ընեմ ձեր գթութեան, ձեր խղճին, ձեր սրտին, ձեր արդարասիրական զգացմանց, և կ'աղաչեմ խնայեցէ՛ք գերդաստանիս պատուոյն, խնայեցէ՛ք իմ կենացս և իրաւունք ըրէք Տիարք իմ, եղբարք իմ, գթացէ՛ք... գթացէ՛ք... գթացէ՛ք...»:

Օգսեկն. — Բիչ մը լալ :

Պաղտասար. — Հի, հի, հի...գթացէ ք...

հի, հի, հի :

Օգսեկն. — Շատ աղէկ ըրիք :

Պաղտասար. — Բանի մ'անգամ ալ ինքնիրե-
նըս վարժութիւն կ'ընեմ... բայց կը հոգնի կոր
մարդ... :

Օգսեկն. — Պատճառն այն է որ գթութեան
առջեւ ներկայանալու համար կատարուելիք ձե-
ւակերպութիւնները քիչ մը դժուար են : Շատ
փաստաբաններ կարեւորութիւն չտալով ասոնց կը
կորսնցնեն իրենց դատերը :

Պաղտասար. — Շնորհակալ եմ որ սորվեցու-
ցիք ինձի : Այս ձեւակերպութիւնները կատարելէն
ետքը դատն անպատճառ վատկինք պիտի, այն-
պէս չէ :


Օգսեկն. — Այո' :

Պաղտասար. — Այդ անգամ կինն ալ գիտէ
արդեօք այս ձեւակերպութիւնները :

Օգսեկն. — Չեմ կարծեր...այսու ամենայնիւ
ջանայ որ կատարել չտաս իրեն :

Պաղտասար. — Իմ կարծիքս ալ աս է :

Օգսեկն. — Առանձին կը թողում զքեզ Պաղ-
տասար աղբար, և վստահ եմ թէ դարձիս յաջող
լուրեր և երրորդ վճարումն յիսուն ոսկին պիտի
ընդունիմ :



Տ Ե Ս Ի Լ Գ .

ՊԱՂՏԱՍԱՐ

Բարի մարդ է, շիտակ մարդ է, բայց բոլոր
խօսքերը յիսուն ոսկիով կը վերջանան : Գո՛հ սըր-
տով պիտի վճարեմ այդ գումարն ալ, բաւական
է որ ազատիմ սա կնոջ ձեռքէն, պատիւս պաշտ-
պանեմ և խայտառակ չըլլամ բարեկամաց առջև :
Սա մեր դասն անգամ մ'ալ սերտենք : (Կը ծերաց-
րի) Տիարք իմ...ո՛չ, Տիարք իմ... կոչում կ'ընեմ
ձեր գթութեան (բազկաւարած), ձեր խղճին (Սուր,
Փայլակ ու Երկար դրան առջեւ կ'երեւան), ձեր սըր-
տին, ձեր արդարասիրական զգացմանց, և կ'ա-
ղաչեմ, խնայեցէք գերդաստանիս պատուոյն, խը-
նայեցէ՛ք... :

Տ Ե Ս Ի Լ Գ .

ՊԱՂՏԱՍԱՐ, ՍՈՒՐ, ՓԱՅԼԱԿ, ԵՐԿԱԹ

Սուր. — Պաղտասար աղբար... :

Պաղտասար. — (Չըսելով) Իմ կենացս և ի-
բաւունք ըրէք Տիարք իմ... :

Փայլակ. — Պաղտասար... :

Պաղտասար. — Եկա՞ք, հո՞ս էք...ե՞րբ եկաք .

չմացայ, ներեցէ՛ք, հրամմեցէ՛ք, նստեցէ՛ք ձեր աթոռներուն վրայ: (Կը նստի):

Սուր. — Ձեր խնդիրն...:

Պաղտասար. — (Հրահանկաց հառնաձայն) Տիարք իմ, կոչում կ'ընեմ ձեր գթութեան, ձեր խղճին, ձեր սրտին, ձեր արդարասիրական զգացմանց, և կ'աղաչեմ, խնայեցէ՛ք զերդատանիս պատուոյն, խնայեցէ՛ք իմ կենացս և իրաւունք ըրէ՛ք, Տիարք իմ, եղբարք իմ, գլխացէ՛ք, գթացէ՛ք...:

Սուր. — Հանդարտէ՛, Պաղտասար աղբար, արդարութիւնն ի լոյս եկած է: Յանձնաժողովս ամէն միջոց ձեռք պիտի առնու գոհացում տալու համար ձեր պատուոյն և յագուրդ՝ ձեր արդար կրից... արգէն ձեր կրին թաղական խորհրդարանը բանտարկուած է...:

Պաղտասար. — Մեծապէս շնորհակալ եմ... տունս կործանեցաւ...:

Փայլակ. — Թէպէտե կան ինչ ինչ գէպք նրբացուցիչք յանցանաց...:

Պաղտասար. — Ոտքերնիդ պագնեմ, այդ ինչ ինչը չկայ:

Երկար. — Ըստ որում կին մ'և աղջիկ մը խաբել ուզեր էք...:

Պաղտասար. — Սուտ է:

Փայլակ. — Այսու ամենայնիւ Յանձնաժողովս նախ պիտի զբաղի զձեզ ձեր կնիկէն բաժնելու խնդրով և յետոյ ձեռք պիտի առնու միւս խընդիրը:

Պաղտասար. — Միւս խնդիրը սուտ է:

Սուր. — Ձեր վկայութիւնը բաւական չէ:

Երկար. — Կարդացէք ուրեմն մեր տեղեկա-

գիրն:

Սուր. — Սքանչելի տեղեկագիր մ'եղաւ:

Փայլակ. — Բոլոր յանցանքը կնոջ վրայ կը թողու:

Սուր. — Թէև մենք պարտականութիւն չունինք բնաւ ձեզ կարդալու տեղեկագիրն որ Դատաստանական Խորհրդոյն ուղղուած է, սակայն ցոյց տալու համար թէ Յանձնաժողովս ի՛նչ անաչառութեամբ և արդարութեամբ քննած է խնդիրը, կը կարդանք ձեզ անոր եզրակացութիւնը: (Կը կարդայ) Ա՛րդ նկատելով որ Պաղտասար աղբարի և կնոջ միջև անհամաձայնութիւն ծագած է ինչ ինչ պատճառներու համար որոնց յայտնութիւնըն զանց կ'ընէ Յանձնաժողովս, նկատելով որ այդ անհամաձայնութեամբ Պաղտասար աղբարի և կնոջ միջև համաձայնութիւն չկայ որչեց անոնց բաժանումը հետեւեալ պայմաններով. Պաղտասար աղբար ոտք չպիտի կոխէ տունը:

Պաղտասար. — (Որ ծունկ չոխած էր ոտքի կ'եղնէ) Ի՛նչ կ'ըսէք...:

Սուր. — (Շարունակելով) Եւ ամբողջապէս կնոջը տրամադրութեան ներքե պիտի թողու զայն: Պաղտասար աղբար ամսէ ամիս երեսուն ոսկի պիտի վճարէ իւր տիկնոջ որպէս զի սա կարենայ այդ գումարով իւր ապրուստը հոգալ և պատուաւոր կերպով ապրի:

Պաղտասար. — Այս կնիկը նորէն ինձի կուտաք կոր...:

Սուր. — (Շարունակելով) Եւ այդ վճարումն պատուաւոր երաշխաւորութեամբ ապահովելու պարտական պիտի ըլլայ: Իսկ այն պարագային

մէջ ուր կինն ուզէ վերստին իւր էրիկն ընդունիլ՝
Պաղտասար աղբար ուէ ընդդիմադրութիւն մ'ընե-
լու իրաւունք պիտի չունենայ :

Երկար. — Չհաւնեցա՞ք այս եղբակացութիւ-
նը... :

Պաղտասար. — Հաւնելո՞ւ բան է... պատիժն
ինձի տուեր էք... :

Փայլակ. — Կ'ուզէիք որ կինն անօթութենէ
մեռցնէի՞նք :

Պաղտասար. — Ո՛չ, բայց... :

Սուր. — Եթէ ձեր կինն որ մը գայ ձեր ձեռ-
քը համբուրէ ու մեղայ ըսէ, դարձեա՞լ պիտի չըն-
դունիք զինքը :

Պաղտասար. — Հարկաւ պիտի չընդունիմ,
սատանան տեանէ երեսը... :

Սուր. — Ուրեմն անկարելին կը պահանջէք
դուք... Պաղտասար աղբար, Պաղտասար աղբար,
ինձի նայէ, դուն տղայ չես և համոզուելու ես որ
մշտնջենական կերպով չես կրնար կնիկէդ բաժնը-
ւիլ, դուք երկուքդ մէկ մարմին էք... :

Պաղտասար. — Հապա կի՞ պարը... :

Սուր. — Ատիկայ պաշտօնական կերպարանք
չունի, ազգն պաշտօնապէս մէկ մարմին կը ճա-
նաչէ զքեզ և կինդ. մենք անկարող ենք այդ
մարմինը բաժնելու մշտնջենապէս :

Փայլակ. — Հետեւաբար Յանձնաժողովոյս
ըրած կարգադրութիւնն սիրով ու շնորհակալու-
թեամբ ընդունիլ պարտ էր ձեզ :

Պաղտասար. — Ըսել է թէ մինչև որ մեռնիմ
այս փորձանքէն չպիտի կրնամ խալսիլ :

Սուր. — Այսինքն ձեր կնոջմէն :

Պաղտասար. — Ա՛հ, ոտքս կոտրէր ու թատ-
րոն չերթայի այն գիշեր, ինչո՞ւս պէտք էր իմին
թատրոն... թատրոնս պակաս էր... տունդ նըս-
տէ՛, Նարեկդ կարդա՛, մարդ Աստուծոյ... :

Փայլակ. — Խեղքդ ո՞ւր էր այն ատեն :

Երկար. — Ինչո՞ւ վիճակիդ յարմար կին մը
չառիր :

Պաղտասար. — Կարգուելն ինչ մեծ յանցանք
է եղեր... բայց, ինչ որ ալ ըլլայ, չեմ կրնար ձեր
եղբակացութիւնն ընդունիլ :

Սուր. — Բռնի ընդունիլ պիտի տանք :

Երկար. — Եթէ հարկը պահանջէ՛ մինչև ան-
գամ բանտը պիտի դնենք զքեզ :

Փայլակ. — Մենք չենք կրնար մեր նախնեաց
աւանդութեանց հակառակիլ : Դուն անոր օրինա-
ւոր ամուսինն ես. քիչ մը ժամանակի համար մի-
այն կրնաք բաժնուիլ :

Սուր. — Երթանք ուրեմն, մենք գործ չու-
նինք այլ եւս հոս. Դատաստանական Խորհրդոյն
անկ է իւր վճիռը հաղորդել և գործադրութիւնը
պահանջել :

Տ Ե Ս Ի Լ Ե .

ՆՈՅՆԻ ԵՆ ԱՆՈՅՆ

Անոյ՛. — (Երեւոյ թևակակեկ աւելի անրկցու-
ցած, ընկալներն աւելի սեղցուցած եւ հասցուցած,
զիտուն շիճոռ մագ սևցուցած եւ արսասուկեղով այն-

պէս որպէս թէ սոցեւի երկու ակոսյներն ինկած ըլլային) Կեցէ՛ք, Տիարք իմ, անմեղ մը զո՞հ կերթայ ինձի համար... ես էի որ Կիպարի հետ այդ տունէն դուս կ'ելնէի և ոչ թէ Պաղտասար աղբաւրին կինը :

Սուր. — Դու՞ք էիք :

Անոյշ. — Ես :

Փայլակ. — Դիտեցէ՛ք որչափ կը նմանի Անոյշ չի : Ի՞նչ մ'աւելի ճերմակ է և ընքուիներն՝ աւելի սեւ և աւելի հաստ :

Երկար. — Այդպէս է, կարծես թէ երկուորեակ են. ասոր ձայնն աւելի հաստ է և կը ծեփեւեփէ :

Պաղտասար. — Ո՛չ, ո՛չ, աս չէր... իմ կինս էր :

Սուր. — Արդարութիւնն վերջապէս երեւան եկաւ :

Երկար. — Աղէկ որ տեղեկագիրն տուած չենք :

Անոյշ. — Կը խնդրեմ, խնայեցէ՛ք այդ կնոջ պատւոյն, ազատեցէ՛ք զինքն այս անխիղճ մարդէն, այս վայրենի մարդէն :

Պաղտասար. — Ի՞նչ խօսքեր են ասոնք :

Անոյշ. — Ես կը ճանչնամ զքեզ, ինչպէս նաև քու ամուսնական հաւատարմութիւնդ :

Երկար. — Պաղտասար աղբար, ի՞նչ կ'ըսէ :

Պաղտասար. — Մի՛ հաւտաք, սուտ է...

Անոյշ. — Ինքը շատ աղէկ կը ճանչնայ զիս :

Պաղտասար. — Առաջին անգամն է որ կը տեսնեմ :

Անոյշ. — Սակայն ես կրնամ հաստատել թէ զիս ալ գլխէ հանողը դուն ես, թէ դուն ես պատճառ իմ թշուառութեանս : Անգու՛թ մարդ... ինք-

զինքդ բարեպաշտ ու միամիտ ցոյց տալ կուզեմ, բայց զիս ալ չես կարող խաբել : Բացէ՛ք տիարք իմ աջ թեւը և տեսէք հո՞ն կարմիր նշան մը : (Կը բանակ ու կը գտնեն կարմիր նշանը) :

Սուր. — Ես կը պատուեմ այս տեղեկագիրը :

Երկար. — Ի՞նչ խաբեբայ մարդ է եղեր աս :

Անոյշ. — Ո՛հ, գթացէ՛ք խեղճ կնոջ, այդ առաքինի կնոջ... :

Փայլակ. — Երթա՛նք բարեկամ երթա՛նք. և դուն ալ պատրաստուէ բանտ երթալու, ոճրագործ... :

Երկար. — Ազգային իշխանութեան հետ այսպէս խաղալը շատ սուղի պիտի նստի ձեզի : Ա՛լ ամէն բան յայտնուած է :

Պաղտասար. — Թող չէք տար որ ես ալ խօսիմ... ասոնց բոլորը վարպետութիւն է, նենգութիւն է, խորամանկութիւն է, ես այս կերպարանքով կին չեմ ճանչնար... կնոջս կողմէ պատրաստուած խաղեր են ասոնք :

Սուր. — Լռէ՛, անպիտան, լռէ՛ :

Փայլակ. — Լռէ՛ ու քալէ՛, մեզի հետ մէկտեղ պիտի գաս որ իշխանութեան յանձնենք զքեզ :

Պաղտասար. — Բայց ի՞նչ գիտնամ որ նոյն ինքն կինս չէ... կեցէ՛ք... սա... թողէ՛ք որ սպայ... :

Սուր. — Դեռ կը համարձակի՞ս... կինդ թաղական խորհրդարանն է... քալէ՛ :

Երկար. — Աւելորդ խօսքեր չենք ուզեր : Բալէ՛ :

Պաղտասար. — Ո՛չ :

Փայլակ. — Բռնի պիտի տանինք եթէ կամօքըդ չգաս :

Պաղտասար. — Խօսիլ չէք տար որ... :

Անոյ՛. — Ա՛հ... տակաւին խօսի՛լ կ'ուզես : Նորանոր զրպարտութիւններ ստեղծելու համար անշուշտ, անուանարկելու համար կին մ'որ իւր անբասիր վարուքն կրէայ տիպար հանդիսանալ գեղեցիկ սեռին . ս՛հ... Մեծապատիւ Տրարք, խօսիլ մի՛ տաք այս մարդն... :

Փայլակ. — Պաղտասար աղբար, պարասպ տեղը մի ջանար ինքզինքդ արդարացնելու, ամեն բան յայտնուած է և արդարութիւնն ցոյց տուած է իւր լուսաճաճանչ գէմքը :

Պաղտասար. — Ինչո՛ւն պէտք էր իմին թատրո՛ն... :

Անոյ՛. — Եթէ արդարախօս և բարեսիրտ եւ բիտասարդ մը չխոստանար ձեռք կարկառել ինձ և գնացքս ուղղել՝ պիտի կորսուէի այն ճամբուն մէջ ուր առաջնորդեց ինձի նենգութեամբ և խորամանկութեամբ : Այո՛, մեծ յոյս ունիմ որ այս թշուառութիւնս քիչ ժամանակի մէջ երջանկութեան փոխուի, որովհետեւ կիպար խօսք տուած է ինձ հետս կարգուելու : Վստահ եմ ես կիպարի անկեղծութեանն . շատ լաւ գիտեմ թէ զիս միայն կը սիրէ, և հետեւաբար կը պնդեմ թէ Տիկին Անոյ՛ի հետ բնաւ սիրային յարաբերութիւն ունեցած չէ :

Սուր. — Կը խնդրեմ, մի յուզուիք, օրիորդ, Յանձնաժողովս քաջ վերահասու եղած է արդէն Պաղտասար աղբօր բռնած ընթացքին, և որոշած է արժանն անօրինելու :

Պաղտասար. — Եթէ հիմա խելքս չփախցնեմ բնաւ փախցընելիք չունիմ :

Անոյ՛. — Ա՛հ, քանի ծանր է ինձ երկրորդ անգամ խարուիլը և եթէ իմանամ թէ կիպար կը խաբէ զիս, թէ կիպար ուրիշի մը նուիրած է սիրալ, ս՛հ, այն ատեն ուրիշ բան չմնար ինձ ընել եթէ ոչ ատրճանակով... :

Փայլակ. — Հանդարտէ՛, օրիորդ, հանդարտէ՛... :

Տ Ե Ս Ի Լ 2.

Ն Ո Յ Ն Ք Ե Լ Կ Ի Պ Ա Ր

Երկար. — Կիպարն եկաւ ահա :

Անոյ՛. — Կ'ազաչեմ, ըսէք ինձ, իրա՞ւ է թէ դուք կը խաբէք զիս :

Կիպար. — Ի՛նչ հարցում է այդ :

Անոյ՛. — Թէ Տիկին Անոյ՛ը կը սիրէք :

Կիպար. — Միթէ կարելի՞ է ձեզմէ բաժնուիլ և դրժել խոստմանցս : Ո՛հ, կը խնդրեմ, ուրիշ անգամ այդ տեսակ հարցում մի ուղղէք ինձի, եթէ չէք ուզեր սիրոսս վերաւորել : Դուք իմ միակ երջանկութիւնս էք, իմ յոյսս էք, իմ կեանքս էք, իմ հոգիս էք, և ինչպէս կրնամ մերժել զքեզ (Կը գրկե Անոյ՛ը) :

Պաղտասար. — (Բարկութեամբ) Ի՛նչպէս յանձնաժողով էք դուք... :

Կիպար. — Եւ ամէն բան պատրաստուած է

քանի մը օրէն մեր ամուսնութեան հանդէսը կատարելու և չար լեզուները կարկելու համար: Բայց ի՞նչ հարկ ստիպեց զձեզ հոս գալու:

Անոյժ. — Անմեղ կնոջ մը պատիւը պահպանելու հարկը, Տիկին Անոյշը պաշտպանելու պետքը, որուն սիրականն կը կարծէ զձեզ Պաղտասար աղբարը:

Կիպար. — Հիմա կը հասկնամ... հիմա միտքըս կուգայ թէ ինչպէս Պաղտասար աղբար բռնեցած է այդ սխալ կարծիքը... կարծեմ թէ զձեզ Տիկին Անոյշի նմանցուցած է:

Անոյժ. — Ոչ թէ միայն նմանցուցած է այլ կը պնդէ որ ես Տիկին Անոյշ ըլլամ:

Սուր. — Ատոր պնդելուն ո՞վ կարեւորութիւն կուտայ:

Կիպար. — Դուք Տիկին Անոյշն էք եղեր... խեղճ մարդ...:

Պաղտասար. — Դուն ես խեղճ մարդ:

Կիպար. — (Առ Սուր) Կարծեմ թէ այդ մարդուն ուղեղը մնասուած է և բարեսիրական գործ մը կը կատարէք եթէ Փրկիչ զնէք զինքն ու բժշկաց խնամոց յանձնէք:)

Պաղտասար. — Ես խենդ չեմ:

Երկաթ. — Ես ալ կամաց կամաց կ'սկսիմ կարծել թէ ուղեղի պղտիկ հիւանդութիւն մ'ունի այդ մարդը:

Փայլակ. — Երկու տող նամակով մը Փրկիչ զրկելու է ուրեմն զինքն. մեղք է խեղճ մարդուն:

Պաղտասար. — Խենդ էք, ի՞նչ էք:

Սուր. — Ի՞նչ մը դուրս ելնենք Պաղտասար աղբար:

Պաղտասար. — Ոչ, այս ամենն իմն է, տան տէրն ես եմ:

Փայլակ. — Մի՛ օտիպեր զմեզ խիստ միջոցներու դիմել:

Պաղտասար. — Դիմեցէք:

Երկաթ. — Պարտաւոր էք գիտնալ թէ պաշտօնական մարմին մը կարող է իւր առաջադրած նպատակին հասնիլ, ուստի քաղցրութեամբ կը հրաւիրեմ զքեզ յօժարակամ ընկերակցիլ մեզ:

Պաղտասար. — Ես խենդ չեմ:

Սուր. — Բոլոր խենդերն այդպէս կ'ըսեն:

Կիպար. — Եթէ խենդ չէ՛ չարագործ մ'է:

Երկաթ. — Երթանք, Պաղտասար աղբարս, երթանք: (Աջ քեռեկ կը բռնէ):

Փայլակ. — Երթանք, սիրելիս, երթանք: (Զախ քեռեկ կը բռնէ):

Սուր. — Ուրախ եմ թէ Պաղտասար աղբար չստիպեց զմեզ խիստ միջոցներ ձեռք առնելու:

Պաղտասար. — Ինչո՞ւ կը քաշէք թեւերէս: (Կ'ընդդիմանայ եւ ջուղեր երթալ): Ինչ տմարդութիւն է աս...:

Երկաթ. — Պաղտասար աղբարը բարի մարդ է: (Միջոց փախչի):

Փայլակ. — Պաղտասար աղբարը խոհեմ մարդ է: (Թեւեկ կը փախչի):

Պաղտասար. — Թող տուէք թեւերս: Ի՞նչ ըրի ես ձեզի... ի՞նչ բռնութիւն է աս... ի՞նչ անբաւարարութիւն է աս... ի՞նչ բարբարոսութիւն է աս:

Սուր. — Յանձնաժողովս բարեբաստ կը համարէ ինքզինքը նկատելով թէ Պաղտասար աղբար դժուարութիւններ չյարուցաներ...:

Պաղտասար. — Անբարոյական կին մը կը

պաշտպանէք և պատուաւոր մնալ ուզող ամուսին
մը կը քաշկուտէք: Ո՞ւր կերթանք... Ինչո՞ւ կը
քաշկուտէք... չէ՞ք ամէնար... չէ՞ք խպնիր...:

Երկարք. — Բայլ մ'ալ:

Փոլլակ. — Բալէ', եղբայրս, քալէ':

Պաղտասար. — Մի՛ քաշէք... փաստարանս
կ'ուզեմ... փաստարանս ալ հետ պիտի առնեմ,
փաստարանս...: (Կը մեկնին):

S E U T L E .

ԱՆՈՅՇ, ԿԻՊԱՐ

Անոյշ. — Ինչպէս կատարեցի դերս, հաւնեցա՞ր:

Կիպար. — Առաջին կարգի դերասանուհւոյ
մը պէս:

Անոյշ. — Պէտք է խոստովանիլ սակայն թէ
յանձնաժողովոյ անդամներն ալ բաւական նպաս-
տեցին մեզ:

Կիպար. — Այո՛, որովհետեւ նախապէս ա-
նոնց խրաքանչիւրին հետ մասնաւոր տեսակցու-
թիւններ ունեցայ և խոստացայ գոհ ընել զիրենք:
Պատիւդ անարատ պահելու համար ըրի ինչ որ
կարող էի ընել: Զանքերս ապարդիւն չմնացին:

Անոյշ. — Երախտապարտ թողուցիր զիս սի-
րելի Կիպար. առանց քեզի կարելի չէր ինձ պատ-
րուակել յանցանքս: Աշխարհի առջեւ նախատա-
նաց արժանի, զգուելի էակ մը պիտի ճանչցուէի
և ո՛վ գիտէ ինչ տխուր կեանքի մը մէջ անոք և
անօգնական պիտի տառապէի...:

Կիպար. — Երեւակայական դժուարութիւնս

ներու վրայ տրամելու հարկ չկայ: Ամէն վտանգ
անցած է, սակայն մեր պաշտօնը դեռ լրացած չէ:
Սենեակդ գնա՛, երեսդ լուա, իսկական դէմքդ
ստացի՛ր, հազուստդ փոխէ՛ և ինձի սպասէ՛:

Անոյշ. — Կը հնազանդիմ: Ի տեսութիւնս:
(Կը մեկնի):

S E U T L E .

Կ Ի Պ Ա Ր

Գործը թէև յաջող երեւոյթ մ'ունի առ այժմ,
սակայն կրնայ փոխուիլ եթէ մեր խոստումը չը
կատարենք և չվճարենք այն նուէրներն զորս
խոստացանք և որոնց միայն պարտաւոր ենք մեր
խնդրոյն յաջողութիւնը: Հիմակուրնէ աշխատինք
ուրեմն այդ նուէրները Պաղտասար աղբարէն փըր-
ցընելու միջոցներուն վրայ խորհիլ:

S E U T L E .

ԿԻՊԱՐ, ՓՈՅՆԱԿ, ՊՍՂՏԱՍԱՐ

Փայլակ. — Ասանկ պարագայներու մէջ խո-
հեմութեամբ վարուիլ հարկ է. սխալ մը որքան
չուտ ուղղուի այնքան փոքր կ'ըլլայ վնասը: Կը
չնորհաւորեմ ուրեմն զձեզ որ վերջապէս ճանչցաք
ձեր սխալն և որոշեցիք ուղղել զայն՝ հաշտուիլ
ուզելով ձեր կնոջ հետ որ կանանց դասուն մէջ
իր առաքինութեամբն կը փայլի:

Պաղտասար. — Այո՛, այո՛: (Մեկուսի) ես գիտեմ ընկերքս:

Փայլակ. — Այս եղանակաւ գայթակղու-
թիւնը կը բառնայ ի միջոց, չար լեզուները կը
պապանձին և յանձնաժողովս ալ ինքզինքն բա-
րեբախտ կը համարի ձեր և ձեր կնոջ մէջտեղ
պատուաւոր հաշտութիւն մը գոյացնելուն համար:

Կիպար. — Երբ առաջին անգամ Պաղտասար
աղբար ինք յայտնեց այս խնդիրն և զիս Տիկին
Անոյշին քով զրկեց որ գործն ստուգեմ, ձեռքս
խզճիս վրայ դնելով խնդիրն իւր բոլոր մանրա-
մասնութեամբն քննեցի և սա եզրակացութեան
հասայ թէ կինն անմեղ է և թէ խնդրոյն մէջ թիւ-
րատեսութիւն կայ: Եզրակացութիւնն յայտնեցի
իրեն և մանաւանդ քիչ մ'ալ առաջ երթալով՝ յոր-
դորեցի վինքն որ Դատաստանական Խորհրդոյ
դիմելու գաղափարն մէկզի նետէ, նոյն իսկ եթէ
կինն սասանայէն խաբուելով գործած ըլլայ իրեն
վերագրեալ յանցանքը: Պաղտասար աղբար քիչ
մը անբնական դատեց իմ յորդորներս որք կը
կրկնուէին նաև կնոջը կողմէ:

Պաղտասար. — Իրաւունք ունի Կիպար: (Մե-
կուսի) Ոճրագործ, գազան:

Կիպար. — Գիտէի որովհետե թէ այրն որ
իւր կինն իբրև անպատիւ կ'ամբաստանէ՝ ուրիշ
բան չընեն եթէ ոչ կը հրաւիրէ հասարակու-
թիւնն որ բարեհաճի իւր կինն սիրելու:

Փայլակ. — Շատ ճիշդ կը խօսիք:

Կիպար. — Մինչդեռ տան պատիւը պահպա-
նելու համար պատուաւոր այր մը եթէ կնոջը մէկ
թեթեւ պակասութիւնն իսկ տեսնէ չտեսնելու
զարնելու է:

Պաղտասար. — Անանկ է:

Փայլակ. — Այր մը իւր պատիւն պահելու
համար պզտիկ անպատուութիւններ ընդունելու է:

Կիպար. — Եթէ այսպէս վարուիլ հարկ է
պակասութեան մէջ գտնուած կնոջ մը համար, որ-
քան ուրեմն շրջանայեցութեամբ վարուիլ պէտք
էր կնոջ մը համար որուն դէմքին վրայ պարկեշ-
տութիւնն և անմեղութիւնն կը փայլին: Մեծ սը-
խալ գործեցիք, Պաղտասար աղբար, զրպարտելով
ձեր կինն և անոր հետ ձեր մտերիմն որ այնքան
սէր, վստահութիւն ու համակրութիւն կը տածէր
ձեզի համար:

Փայլակ. — Յանձնաժողովը իւր խորին ու-
շադրութեան առարկայ պիտի ընէ այն կէտն և
այնպիսի տեղեկագիր մը պիտի խմբագրէ ուր
պատուաւոր կերպով պիտի ուղղուի այդ սխալն,
ուր պիտի բժշկուին գայթակղեալ միտքերն, ուր
արեւու պէս յայտնի պիտի երեւայ թէ Պաղտասար
աղբարն ալ անմեղ է, կինն ալ անմեղ է և դուք
ալ անմեղ էք:

Պաղտասար. — Ի՞նչպէս:

Փայլակ. — Պարզապէս պիտի գրուի տեղե-
կագրին մէջ թէ Պաղտասար աղբար իրաւունք
ունէր սխալելու իւր կինն կարծելով կին մը որ
կարծես թէ իւր կինն էր, այնքան նմանութիւն
ունէր իւր կնոջ հետ և թէ մանրաքննին աչօք
դիտել հարկ էր զանոնք իրարմէ որոշելու համար:

Կիպար. — Այս իմաստով շարագրուած տե-
ղեկագիր մը կարող է միայն կործանուած պատիւ
մը վերականգնել:

Փայլակ. — Եւ անցեալն իբրև ոչ եղեալ հա-
մարել տալ:

Կիպար. — Այո՛, պարզապէս թիւրատեսու-
թիւն մը:

Փայլակ. — Այո՛, կատարեալ թիւրատեսու-
թիւն:

Կիպար. — Մանաւանդ թէ առաւել քան
զթիւրատեսութիւն:

Փայլակ. — Եւ ասանկ թիւրատեսութեան մը
համար ո՞ր պատուաւոր մարդ կրնայ մեզադրել
Պաղտասար աղբարը:

Կիպար. — Ոչ ոք: Մարդս սխալական է:

Փայլակ. — Մանաւանդ թէ ամեն մարդ ան-
գամ մ'ալ պիտի տեսնէ փորձով թէ քանի նախան-
ձախնդիր է Պաղտասար աղբար իւր պատուոյն:

Կիպար. — Անտարակոյս: (Մեկուսի) Երթանք
նուէրներն ու Թագուհիին ու Մարթային տրուե-
լիք վարձքն ճարելու ճամբայ մը գտնել: (Կ'եր-
թայ):

Փայլակ. — Այս կերպով ձեր պատիւն աւելի
ևս պիտի բարձրանայ:

Պաղտասար. — Մեծապէս շնորհակալ եմ:
(Մեկուսի) Երեսանց հաշտուելու է և այս դժու-
բին ուրիշ մէկ ելքը փնտռելու է:

Փայլակ. — Եւ առաջուրնէ աւելի սիրով
պիտի ապրիք երջանկութեան մէջ որ շատերու
նախանձը պիտի շարժէ: Ամուսնութեան մէջ
պզտիկ վէճերն երբեմն սէրն աւելցնելու կը ծա-
ռայեն: Գոհ եղէք որ ասանկ պզտիկ վէճ մ'ունե-
ցաք:

Տ Ե Ս Ի Լ Ժ.

Ն Ո Յ Ն Ք, Ե Ր Կ Ա Թ, Ա Ն Ո Յ Շ

Երկաք. — Թիւրատեսութեան վրայ հիմնուած
սխալ մը վերջապէս կ'ուզուի ի մեծ գոհունակու-
թիւն յանձնաժողովոյս. զոյգ մը սիրասուն ամու-
ներ որք թիւրատեսութեան պատճառաւ քիչ մը
ժամանակ բաժնուած էին իրարմէ՛ կուզան այժմ
վերստին միանալ:

Անոյց. — Կը խնդրեմ, միացման վրայ մի՛
խօսիք: Ուխտ ըրած եմ այսուհետեւ առանձին
ապրիլ:

Փայլակ. — (Առ Պաղտասար) Գնա՛ ուրեմն
խնդրել:

Երկաք. — Առանձին ապրելու համար ստեղ-
ծուած չէք դուք, տիկի՛ն:

Անոյց. — Ոչ ալ ասանկ մարդու մը հետ որ
ամեն վայրկեան առիթ կը փնտռէ իւր կիներն վա-
տահամբաւելու և աշխարհի առջև ծաղու նշաւակ
ընելու: Ահ... վարժուած չեմ ես թաղական
խորհրդարաններու մէջ բանտարկուելու և հան-
դուրժելու որ ներս մտնողն քսուի ինձի: (Կուշայ):

Պաղտասար. — (Մեկուսի) Օհ, օհ, օհ... ու-
րիշներն ալ քսուեր են... ուրա՛խ լեր Պաղտա-
սար:

Անոյց. — (Լաղով) Մէկը շրջազգեստէս քաշէ,
միւսը կամթտէ, աս աչք ընէ, այն համբոյրներ
ուզարկէ, ես վարժուած եմ ասանկ խայտառա-
կութեանց:

Երկար. — Մի լաք, աղնիւ տիկի'ն, թիւրի-
մացութեան արդիւնք է այդ...:

Փայլակ. — Որ չկրնար երկրորդ անգամ տե-
ղի ունենալ:

Պաղասաւ. — (Մեկուսի) Եթէ Փրկիչն աչքս
չվախցնէր...:

Փայլակ. — (Առ Պաղասաւ) Նկատելով որ
դուք էք այդ տխուր թիւրիմացութեան հեղինակ՝
կը հրաւիրենք զձեզ որ միխիթարական խօսքերով
սրբէք ձեր տիկնոջն արտասուքը:

Երկար. — Եւ կարելի եղածին չափ շուտ,
եթէ չէք ուզեր Փրկիչի ճամբան բռնել:

Պաղասաւ. — (Անոյշին մօտեակալով) Մի' լար,
տիկին, մի' լար, սրբէ' արցունքդ... ես եղայ
թիւրիմացութեան պատճառ... դուն անմեղ ես,
ես ալ անմեղ եմ, Կիպարն ալ անմեղ է, թիւրա-
տեսութիւն կայ գործին մէջ:

Փայլակ. — Այո', և տեղեկազիրն ընդար-
ձակօրէն պիտի խօսի այս կէտին վրայ:

Երկար. — Զանացէ՛ք անցեալն մոռնալու,
տիկի'ն:

Անոյշ. — Կրնա՞ք երաշխաւորել զիս որ ու-
րիչ անգամ ասանկ թիւրատեսութեան մէջ չպիտի
գտնուի:

Փայլակ. — Այո', կ'ապահովենք զքեզ:

Պաղասաւ. — (Մեկուսի) Հետն ապրելու
միտք չունիմ որ...:

Անոյշ. — Կը հնազանդիմ ձեր կամաց...:

Փայլակ. — Կեցցէ՛ տիկին Անոյշ, որ հաճե-
ցաւ իրաւախո՞ ըլլալ և զիւրացնել մեր փափուկ
պաշտօնը:

Երկար. — Գնացէք ձեր սենեակը քաշուե-
ցէք և հանդարտեցէք, որովհետեւ շատ յուզուե-
ցաք: (Անոյշ կը մեկնի):

Փայլակ. — (Առ Պաղասաւ) Զանացէ՛ք այ-
սուհեանե զինքն գոհ ընելու, ձեր կի՛նն գոհար մ'է:
(Կը մեկնի):

Երկար. — (Առ Պաղասաւ) Սէր և միաբա-
նութիւն կը բարեմաղթեմ, Պաղասաւ արդար:
(Կը մեկնի):

Տ Ե Ս Ի Լ Ժ Ա.

ՊԱՂԱՍԱՎ (Առսմիսի)

Այսպէս են եղեր աշխարհիս գործերը... բըռ-
նութեամբ Փրկիչ կը տանին կոր իբրև խենդ...
անգամ մը հոն երթալէն վերջը իբրև խենդ, աշ-
խատէ՛ ու աշխատէ՛ որ խենդ չըլլալդ հաստա-
տես, որո՞ւ պիտի հասկցնես... եթէ հաշտուելու
համար խօսք չտայի՝ մինչեւ հիմայ խենդերու քն-
վը գնացած պիտի ըլլայի...: Ա՛լ համոզուեցայ
թէ այս անպատիւ կնիկէն բաժնուիլ կարելի չէ,
բայց որովհետեւ անպատիւ ապրիչն ալ անհնար է
ինձ, քիչ մը ժամանակ ալ ակոռայներս կը սխմեմ,
գործերս ուզածիս պէս կը կարգադրեմ և օր մը
կ'ընեմ Ամերիկա կը փախչիմ... ուրիշ ճար չկայ:
Վա՛յ անոնց որ իմինիս պէս կնիկ ունին, Աստ-
ուած ողորմի... իրաւունքն ու արդարութիւնն
իմ հետս ըլլան ու չկարենամ դատը վաստկիլ, ի-

բաւ կամ խենդենալու բան է կամ ճաթելու :
Մէկ թիւրատեսութեամբ այնչափ յայտնի անիրա-
ւութիւններ գործեցին որ դիմանալու բան չէ :
Աս իմ կնիկս է կ'ըսեմ կոր ու չեն ամչնար կոր
ինձի պատասխանելու թէ կնոջդ նմանող կնիկ մ'է
տեսածդ : Իրաւունքը մտիկ ընել չուզողին ուզա-
ծիդ չափ խօսէ , ի՞նչ օգուտ ունի : Բայց , ՚նաս
չունի , այս թիւրատեսութիւնն հիմայ իմ ալ գոր-
ծիս կուգայ , գոնէ մինչև որ գործերս կարգադ-
րեմ իրաւունք կ'ունենամ բարեկամացս ըսելու թէ
խաբուած եմ կին մը կնոջս նմանցնելով , մինչդեռ
եթէ թիւրատեսութիւն չըլլար այս օրուքնէ պար-
տաւոր էի փախչել :

Տ Ե Ս Ի Լ Ժ Բ .

ՆՈՅՆ ԵՆ ՕԳՍԷՆ

Օգսեկն . — Կը յուսամ թէ դատդ նպաստաւոր
կերպով վերջացուցիր և պատժել տուիր այդ լերբ
կինը :

Պաղտասար . — Կը խնդրեմ , մաքուր բռնե-
ցէք ձեր լեզուն , իմ կինս լերբ չէ՛ :

Օգսեկն . — Ի՞նչ է ուրեմն իւր էրիկն մատնող
կինը :

Պաղտասար . — Կինս բնաւ մատնած չէ զիս :

Օգսեկն . — Խենդեցա՞ք :

Պաղտասար . — Ամենեւին :

Օգսեկն . — Ո՞վ էր ուրեմն Կիպարը սիրողը :

Պաղտասար . — Ուրիշ կին մ'որ իմ կնոջս կը
նմանի , այնպէս որ մեծ դժուարութեամբ կարելի
է իրարմէ որոշել զանոնք :

Օգսեկն . — Բնաւ երբէք :

Պաղտասար . — Այո՛ , ես սխալած եմ իմ կի-
նըս կարծելով կին մ'որ մօտերս պիտի կարգուի
Կիպարի հետ : Ես տեսայ այդ կինը :

Օգսեկն . — Ձեմ հաւտար ես , ասոր հաւտալու
համար կատարեալ խենդ ըլլալու է ոք , դուք ա-
զատ էք հաւտալու , գալով մեր յիսուն ոսկւոյն . . .

Պաղտասար . — Այդ գումարը շնորհ ըրէք
ու չվճարենք :

Օգսեկն . — Ամբողջապէս կ'ուզեմ այդ գումարն
իրբեւ վարձք իմ տաժանելի աշխատութեանցս :

Պաղտասար . — Ըստ որում հաշտուեցայ կնոջս
հետ . . . :

Օգսեկն . — Ո՞վ ըսաւ քեզ որ հաշտուիս . . . :

Պաղտասար . — Անմեզ է :

Օգսեկն . — Ինչո՞ւ դատ բացիր իրեն դէմ :

Պաղտասար . — Շատ լաւ :

Օգսեկն . — Եթէ կէս ժամէն չվճարուի պատ-
րաստուէ դատի : (Կը մեկնի) :

Տ Ե Ս Ի Լ Ժ Գ .

Պ Ա Ղ Տ Ա Ս Ա Ր

Անիծեալ կնիկ . . . տունս տեղս քանդեցիր ,
կործանեցիր . . . այսչափ ծախք , այսչափ մտատան-
ջութիւն , այսչափ սիրտ մաշուք և փոխարէն ան-
պատուութիւն . . . :

Տ Ե Ս Ի Լ Ժ Դ .

ՊԱՂՏԱՍԱՐ, ՍՈՒՐ, ԹԱԳՈՒՀԻ, ՄԱՐԹԱ

Սուր. — Ինչո՞ւ կը պուաք, կը պուչտաք, ձեր խնդիրն պիտի կարգադրեմ:

Թագուհի. — Հիմայ պէտք է որ կարգուի աղջկանս հետ...:

Մարթա. — Ամենեւին, խօսք տուած է զիս առնելու:

Պաղտասար. — Այս խաղերը չը պիտի լմնան տակաւին:

Թագուհի. — Խաբերա՛յ:

Մարթա. — Անպատիւ մարդ, ի՞նչ երեսով հաշտուեցար կնոջդ հետ:

Սուր. — Մէյ մէկ խնդրագրով ձեր խնդիրը ներկայացուցէք մեզ որ մանրամասնօրէն քննենք:

Պաղտասար. — Ես ալ՝ ներկայ պիտի գրտնուի՞մ:

Սուր. — Տարակո՞յս կայ:

Պաղտասար. — (Պօռալով) Գնացէ՛ք սրկէ, եթէ ոչ հիմայ կ'երթամ հաւատքս կը փոխեմ:

Տ Ե Ս Ի Լ Ժ Ե .

ՆՈՅՆՔ ԵՆ ԿԻՊԱՐ

Կիպար. — Ի՞նչ աղմուկ է այս:

Մարթա. — Ինչո՞ւ խաբեց զիս, ես անոր խաղալի՞քն եմ:

Թագուհի. — Ասոր պատճառաւ աղջիկս արիւն կը փսխէ կոր:

Մարթա. — Իմին ալ կուրծքս բռնուած է:

Կիպար. — Կ'երեւի թէ կատակ մ'ըրած է ձեզի Պաղտասար աղբարն:

Պաղտասար. — Չեմ ճանչնար զիրենք:

Մարթա. — Չե՞ս ճանչնար:

Թագուհի. — Ստախօս:

Կիպար. — Հեռացէ՛ք, ես կը կարգադրեմ ձեր գործը: (Առ Պաղտասար) Մէյ մէկ գումար տալով վերջացնելու է:

Պաղտասար. — Ինչո՞ւ տամ:

Կիպար. — (Յաճ առ Պաղտասար) Ո՞վ պիտի երթայ գայ դատարաններ ասոնց հետ դատուելու համար. ձեր պատուոյն չիցնար ասոնց հետ ելնել իյնալ: (Առ Թագուհի եւ Մարթա) Գնացէ՛ք, գնացէ՛ք, ես կարգադրեցի ձեր գործը:

Մարթա. — Վստահ ըլլամ թէ պիտի կարգուի հետս:

Թագուհի. — Պատուոյն վրայ խօսք տուա՞ւ աղջիկս առնելու:

Կիպար. — Պիտի ջանամ որ երկուքդ ալ գոհ ըլլաք: (Թագուհի եւ Մարթա կը մեկնին):

Սուր.— Շնորհակալ եմ, Պ. Կիպար որ կարգադրեցիր այս խնդիրը: (Կը մեկնի):

Կիպար.— Ուրիշ վճարումներ ալ կան ընելու, զանոնք ալ կը կարգադրեմ ես, Պաղտասար աղբար, դուք հոգ մի՛ ընէք:

Պաղտասար.— Շնորհակալ եմ, շնորհակալ եմ ձեր անձնուիրութենէ: (Կը մեկնի):

Տ Ե Ս Ի Լ Ժ Գ.

ԿԻՊԱՐ, յԵՏՈՂ ԱՆՈՅՇ

Կիպար.— Վերջապէս յաղթանակը տարինք... Տիկին Անոյշի պատիւն պաշտպանուեցաւ և կեանքը փրկուեցաւ: Ա՛լ սիրտս հանդարտ է և կրնամ գիշերները հանգիստ քուն քնանալ: Խղճիս վրայ անագին բեռ մը պիտի ծանրանար եթէ խեղճ կինն զատապարտուէր իմ պատճառաւ...

Անոյշ.— Կուգամ երախտագիտութիւնս յայտնել ձեզ, սիրելիդ իմ Կիպար, այն քաջութեան համար որով պաշտպանեցիր իմ պատիւս իմ կեանքս, և փրկեցիր զիս սոսկալի ապագայէ մը: Թող տուր ուրեմն որ ինչան երախտագիտութեանս գրկեմ զքեզ: (Գրկախառնութիւն):

Տ Ե Ս Ի Լ Ժ Է.

ՆՈՅՆՔ ԵՆ ՊԱՂՏԱՍԱՐ

Պաղտասար.— (Դրակ տոջել) Դարձեա՛լ...

Կիպար.— Ի՞նչ ... Կարծեցի թէ ... իմ նշանածս էր ... թիւրատեսութիւն...:

Պաղտասար.— (Կիպարի վրակ յարմարեցնելով) Թիւրատեսութիւն ... Տունս կործանեցիր և տակաւին կը համարձակի՞ս ... (Ծեծել կ'ապառնայ Կիպարին որ կը փախչի) Այս թիւրատեսութեան վերջը չի՞ գար, լի՛րբ:

Անոյշ.— Ըրա՛ծդ կը վայլէ՞ ...:

Պաղտասար.— Չե՞ս խզնիր դուն...:

Անոյշ.— Եւ ինչո՞ւ պահեմ ա՛լ ... կը սիրեմ զինքը, հասկցա՛ր... Հեմ ուզեր զքեզ, հեմ սիրեք զքեզ, հեմ սիրած և չպիտի սիրեմ, անպիտան մարդ, անկիրթ: (Բարկութեանը կ'եղնէ):

Վ. Ե Ր Զ



#1

[Faint, illegible text on aged, yellowed paper]



ԳՐԱՏՈՒՆ

ՆՇԱՆ-ՊԱՊԻԿԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ 73, Էսկի Զապրիէ Հաստէսի, 73

ՍԿՍՍԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻԼ

ԱՄԻՈՂՋ ԵՐԿԵՐ

Յ. Յ. ՊԱՐՈՆԵԱՆԻ

Ա.

ՄԵԾԱՊԱՏԻՒ ՄՈՒՐԱՑԿԱՆՆԵՐԸ



ԿՍՄԻԹՆԵՐ



Էջ 176: Գին 6 դրուշ:

Առաջին անգամ է որ Թրեանայեռու մէջ կը փորձուի հեղի
նակի մը ամբողջական գործը զալ հասոցներու շարժով մը:
Եւ ուրախ ենք որ այս շարքը մեր աննման երգիծարանիս,
Յ. Յ. Պարոնեանի գործով կը սկսիմք:

Հեզդհեէ պիտի շանք՝ երկու ամիսը հասորով մը, իր բոլոր
գործերը, բլլան արդէն գրքի ձեւով հոս ու հոն հրատարակուած, կա
րեթերու մէջ ցուած եւ կամ դեռ բոլորովին անթիպ մնացած:

Գին 3

«Ազգային գրադարան»



NL0357054

49899